№ 86 ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 27

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 27 № 86

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով.

Յայտարարութիւնների համար վճարւում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ"

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ 1907 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Концертный залъ музыкальнаго училища
ИМПЕРАТ. МУЗЫКАЛЬНАГО ОБЩЕСТ.
Въ пятницу 27 апрѣля 1907 г.
АЛЬБЕРТЪ ЛОРИЦЪ

дастъ единственный въ своемъ родѣ сеансъ, о которомъ большинство изъ публики только читало и слышало, но не имѣло случая видѣть. Сеансъ этотъ представитъ для публики глубокій интересъ, въ антропологическомъ отношеніи касаясь АНАТОМІИ и ХИРУРГІИ, ПСИХОЛОГІИ и ТЕЛЕПАТІИ.

Г. Лорицъ будетъ вызывать у субъектовъ и животныхъ подверженныхъ этимъ опытамъ Анестезію (болевую нечувствительность тѣла) и Гиперестезію (обостренную болевую чувствительность отдѣльныхъ частей тѣла). Каталепсію т. е. статуическое состояніе въ различныхъ формахъ и видахъ. Извращеніе вкусовыхъ ощущеній. Будетъ угадываніе мыслей публики и производить курьезное зашиваніе РТА иглой съ ниткой самымъ настоящимъ образомъ въ присутствіи всѣхъ. Будетъ прибивать гвоздями руки къ доскѣ безъ боли и вреда и другіе эксперименты внушенія благодаря чему можно вызвать у нѣкоторыхъ лицъ какое угодно состояніе, ощущеніе и воображеніе, несуществующіе въ дѣйствительности, зрительные, слуховые, вкусовые, осязательные и. т. п. ощущенія и различныя галлюцинаціи, неотразимыя идеи и побужденія до того реальныя, что ни одинъ изъ зрителей не усумнится въ дѣйствительности того, что видитъ, или испытываетъ.

Начало ровно въ 8½ ч. веч.

Продажа билетовъ заблаговр. въ помѣщеніи музыкальнаго училища

Подробности объявлены въ особыхъ афишахъ, напечатанныхъ на второй сеансъ 27 апрѣля, съ которыми программа опытовъ будетъ согласована.

առ. 2—2

Թիֆլիսի վաճառականական աւագ Ար. Ն. Միրզօվը

Յայտարարում է, Թիֆլիսի Բօրսայի բարձրագոյն հաստատված կանօնադրութեան § 11 յօդ. 2-րդի հիման վրա, որ նրա գրասենեակում (Ֆրէյլինսկայա փող. տ. № 4) ստորագրութիւն է բացված այն անձերի և հաստատութիւնների համար, որոնք ցանկանում են Բօրսային ընկերութեան անդամ գրվել։ Տարեկան անդամավճար որոշված է նշանակել 30 րուբլի։ Ստորագրութիւնը կը տևէ մինչև բօրսային կօմիտետի անդամների և նախագահի առաջին ընտրութիւնը։

Վաճառականական աւագի գրասենեակը բաց է ամէն օր՝ առաւօտեան ժամը 9-ից մինչև ժամը 2-ը ցերեկվայ, բացի տօն օրերից։ (27, 29, 2 մ.) առ. 2—3

Լոյս տեսաւ եւ ծախւում է

ԱՐԵՒԱՆ ՁԱՅՆԵՐ

երրորդ տպագրութիւն

փոփոխված, ճոխացրած, 224 երես

ԳԻՆԸ 50 ԿՈՊԷԿ

Դիմել՝ Թիֆլիս «Գուտտենբերգ» և «Փարոս» գրախանութները, Երևան՝ Ս. Օհանջանեանին, Բագու՝ Բունիաթեանցի գրախանութը հայոց եկեղ. կից, Կարս՝ Եղբ. Մկրտումեաններին։ Մեծ քանակութեամբ գնողներին զեղչ։ Ստ. Մ.-Սողոմոնեան, Тифлисъ Успенская ул. № 3.

(ա. օ.) առ. 3—10

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

միջնակարգ կրթութեամբ, որը ուսանում է Ներսիսեան դպրոցի լսարանում և ունի հայոց լեզուից գիմնազիայի ուսուցչութեան ցենզ, ցանկանում է դասեր ունենալ ընտանիքներում։ Համաձայն է և ամառանոց գնալու կամ ամառանոց տանելու։ Պատրաստում է նաև թէ Ներսիսեան դպրոցը աւարտելու և թէ ծխական ուսումնարանների զանազան ցենզեր ստանալու համար։ Հասցէն իմանալ «Մշակի» խմբագրատանը։ առ չ. կ. 1—5

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՄԱՍՆԱԳԷՏ

սիֆիլիս, միզային, վեներական եւ մորթու հիւանդութիւնների։

Ընդունում է ցերեկ. 1—3 ժ., երեկ. 6—8 ժ.

Սօլօլակ, Բեհբութեան փող. № 33։

(ա. օ.) առ. 45—50

Կարսում հիմնվելիք փոխադարձ

ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ

խնդրում է այն անձանց, որոնք ցանկանում են ստանձնել ընկերութեան գլխաւոր հաշուապահի պաշտօնը, դիմել իրանց մանրամասն պայմաններով Կարս Ամբրոսիոս Գրիգորեան Սարոշչիկեանին։ (ա.օ.) առ. 2—3

ԶԱՏԿԱԿԱՆ

վայելուչ ընծայ

ՅԻՍՈՒՍ ԽԱՉԱԿԻՐ

ընտիր եւ նուրբ մեծադիր նկար

Պատրաստված Պարիզում

(տակաւաթիւ)

Գինը մինչեւ Զատիկ

ԱՂԲԻՒՐ ԵՒ ԳԵՂԱՓՆՋԻԿԻ բաժ. համար 2 ր. հայ պար. միւս բոլոր թեր. համար 2 ր. 50 կ. Հայերէն ոչ մի թերթ չստացողների համար 3 ր. Զատկից յետոյ անխտիր ամենքին համար 5 ր.

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Агбюръ»—«Таразъ» ա. ա. օ. 8—10

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալեքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը ժ. 11—5 ժ.

ՌՈՒԴՆԵՆԿՕ.—Ներքին հիւ. կիրակի 3—4 ժ.։
ԽԱՆՋԵՎՍԿԻ.—Ականջի, քթի և բգի, ամէն օր ժ., 2—3։
ՎՆՈՒԿՈՎ.—Վիրաբուժ. ամէն օր 2—3 ժ.։
ՌՕԶՄԱՐԻՆՍԿԻ.—Երեխ. ամէն օր 4—5. բացի շաբ. և կիր.։
ԴՕՐՕԲՑՈՎԱ.—Մասսաժ. ամէն օր 11—5։
ԱՍՊԻՍՕՎ.—Ականջի, բգի, քթի. երկ., երեք., շաբ. 1—2, չորեք., կիր. 12—1։
ՆՕՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., ամէն օր, 1—2 բացի կիրակի օր։
ՊԱՒԼՕՑԿԻ.—Վիրաբ. ամէնայն օր 12—1։
ԴՕՐԱԼԵՎԻՉ.—Ներքին, ամէն օր 1—2։
ՆԷՈՒՑՄԻՆ.—Աչքի, երկ., չոր., հինգ., ուրբ., 12—1։
ԻՆԱԵՎ.—Կանանց, ամէն օր 4—5
Կին բժ. ԽՕՍԵԼԻԱՆԻ.—Կանանց երկուշ., չոր., հինգ. ուրբ., կիր. 11—12։
ՏԷՏՐԱՇԷ.—Կաշուի, վեներ. ամէն օր 1—2
ԲՕԺՕՄՍԿԻ.—Ներքին հիպնօզով, ամէն օր 4—5։
ՄՕՆՍԷ.—Երեխ. երեքշ., հինգշ., շաբ., 4—5 ժ.
ՆԵՎԶՕՐՕՎԱՆ.—Ատամի հիւ. ամէն օր 11—5, կիր. 1—3։
ՊԻՎԱՐՍԿԻ, ԶՈՒԴՆՕՎՍԿԻ } Կլինիքական անալիզներ։

Բժշկական համախորհուրդներ, մասսաժ, սըրսկում, անդամահատութիւն անալիզ, հիպնօզ, սնունդների և սպասաւորների քննութիւն—ըստ համաձայնութեան։

առ. (չ. ու. կ). 91—143

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ահա մեր խօսքը. Վերջին տեղեկութիւններ. Պետական Դումայի շուրջը. Մամուլ. Բարեգործական Ընկերութիւն Եւպատօրիայում. Թատրոնը Ախալցխայում. Դահիճ ամուսինը. Նամակ Երևանից. Միթէ արդարացրիք ձեզ. Նամակ Կրասնօվօդսկից. Սպասած սրտեր. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ—Նամակ Գերմանիայից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—Թիֆլիսի հայուհեաց Բարեգործական Ընկերութեան 25-ամեակի առիթով։

ԱՀԱ ՄԵՐ ԽՕՍՔԸ

I

Մենք շարունակ բողոքել ենք և այժմ էլ բողոքում ենք այն թայֆայական խաղերի դէմ, որոնք կատարվել են մեր կեանքի մէջ և այն դաւերի դէմ, որոնք անվում են Էջմիածնում միմեանց փասելու, միմեանց խանգարելու համար։

Մեր բողոքը եղել է բացարձակ և հետևողական։

Մենք վնասակար ենք համարել մասնաւոր ազդեցութիւնների այն խաղը, որ շատ անգամ թագաւորել է թէ Էջմիածնում և թէ մեր հասարակական հիմնարկութիւնների մէջ և ցանկացել ենք, որ ամէն տեղ, ամէն գործի մէջ ղեկավար հանդիսանան սկզբունքները, գաղափարները և որոշ ծրագրական հայեցակէտերը։

Այդպէս ենք եղել և այդպէս էլ կը լինենք միշտ։

II

Սակայն կան չարամիտ գրիչներ և գործողներ, որո՞նք ցանկանում են հասարակութիւնը մոլորութեան մէջ գցելու և «Մշակի» անունը յիշել այնպիսի գործերում, որոնք ոչ մի կապ չունեն ոչ մեր լրագրի և ոչ մեր համակրողների հետ։

Այդպիսի չարամիտ փորձեր մի քանի անգամ արել են «Փայլակ» լրագիրը և նրա համամիտ նախորդները։ Եւ «Փայլակի» վերջին համարը զանազան մութ ակնարկներ է թոյլ տալիս բոլորովին մեզ անծանօթ գործերի վերաբերութեամբ։ Եւ ինչ է ուզում ասել—այդ էլ չը գիտենք, բայց պարզ է, որ ցանկութիւն ունի ինչ որ դաւեր և չարամիտ խարդաւանանքներ անցկացնել։

III

Բոլոր երկդիմի ակնարկները, բոլոր մութ խօսքերը, բոլոր կիսաբաց նկատողութիւնները—դաւադրական ինչ որ անմաքուր փորձեր են, որոնք կը մնան ապացոյցներ այն բանի, թէ ինչ անազնիւ միջոցների ընդունակ են մեր հակառակորդները։

Ոչ, պարոններ։ Մենք բողոքել ենք այն վակխանալիայի դէմ, որը ղեկավարել է մեր շատ գործերը և մենք բացէիբաց մեզ հեռու ենք պահել նրա տիղմի մէջ ոտք կոխելուց։ Եւ մենք հեռաւոր կերպով անգամ առիթներ չենք ներկայացնի ոչ մի թիւրիմացութեան և համարձակ բողոքում ենք ամէն մի չարամիտ ակնարկի դէմ, որը ցանկութիւն ունի պղտորել մտքերը։

IV

Մենք լաւ հասկանում ենք «Մշակի» հակառակորդների դաւադրական տրամադրութիւնը։ Նրանք կամենում են մութ ակնարկներով մի ինչ որ բան հասկացնել ընթերցողներին և այդպիսով թէկուզ ժամանակաւոր տպաւորութիւններ գործել։

Դա անազնիւ և անմաքուր մի փորձ է, անշուշտ դատապարտված անյաջողութեան այնպէս, ինչպէս անյաջող էին նախկին սուր ակնարկները «Մշակի» մասին։

Մենք չունենք Էջմիածնում գործակալներ և ոչ ոքի ձեռքով ոչ մի գործի վրա մասնաւոր ազդեցութիւններ չենք գործ դնում։

Յետ նայեցէք ձեզ վրա և ձեր չափով ուրիշներին մի չափէք։

Ա. Ք.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Էջմիածին, 19 ապրիլի

Պետական Դումայի նախագահ Ֆ. Ա. Գոլովինը հետևեալ շնորհակալական հեռագիրն է ուղարկել Հայոց Կաթողիկոսին, նրա Դումային յայտնած բարեմաղթութիւնների առիթով.

«Պետական Դուման Ձեզ, ի դէմս Ձեր հայ եկեղեցու ու հայ ժողովրդին յայտնում է իր խորին շնորհակալութիւնը Ձեր աղօթքների, բարեմաղթութիւնների համար և օրէնսդրութեան մեծ գործին ձեռնամուխ լինելով ոգևորված է այն մտքով, որ նրա աշխատանքների նպատակը ռուսական պետութեան բոլոր քաղաքացիների երջանկութիւնն ունի ի նկատի, և բոլոր քաղաքացիների համակրանքը թող Դումայի անդամների աշխատանքի նեցուկը հանդիսանայ»։

(«Փայլակ»)

—

Առաջաձորից ապրիլի 18-ից մեզ գրում են. «Օրերս կառավարութիւնը մեր գաւառի չքաւորներին փող բաժանեց իբրև փոխառութիւն։ Ընտանիքի ամէն մի անդամին մի րուբլի տուին, իսկ հայ-թուրքական ընդհարումներից տուժած ազգաբնակութեան ամէն մի անդամին 3—5 րուբլի։

Խեղճ չունևորը այդ մինիմալ դրամը ինչի գործադրէ, որ իր վերքը առողջանայ. հացի տայ, սերմացուի տայ, թէ լծկանների...

Գաւառապետը յայտնեց հայերին, որ թուրք քօչւորները, թարաքամաները շուտով բարձրանալու են «եյլաղները», սարերը, աւելացնելով, որ եթէ հայերը կը յանդգնեն անհանգստացնելու թուրք քօչւորներին... այն ժամանակ հայերը խիստ կը պատժվեն։

Եւ միթէ հայերից սպասելի է այն, ինչ որ պ. պ. պաշտօնեաներն են մտածում։

Բ. Զ.

—

Գանձակ, 25 ապրիլի.—Ապրիլի լոյս 25-ի գիշերը, ժամը 2-ին, իր բնակարանի մուտքի մօտ սպանվեց նահանգական գաղթականական վարչութեան անդամ Լէչշինսկին։ Մարդասպանը ազատ է։

(«Հ. Գ.»)

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

«Пет. Газ.» լրագրի մէջ տպագրված է Ի. Վ. Հեսսենի հետ ունեցած խօսակցութիւնը, որը ասել է հետևեալը. «Շուտով հերքեցէք լրագիրների հաղորդած այն լուրը, թէ Պետական Դումայի նախագահ Ֆ. Ա. Գոլովինը հրաժարական է տալիս։ Վճռական կերպով յայտնում եմ, որ Գոլովինը երբեք մտադրութիւն էլ չէ ունեցել հրաժարական տալու»։ Ապա Հեսսենը պատմել է բոլորը, ինչպէս որ տեղի է ունեցել. «Երկուշաբթի երեկոյեան, ինցիդենտից յետոյ, Պ. Ա. Ստոլիպինը իր մօտ է հրաւիրել խորհրդակցելու մինիստրներ Կոկովցեվին և Ֆիլոսոֆովին։ Թէ ինչ հետևանք ունեցաւ այդ խորհրդակցութիւնը, ես չը գիտեմ, բայց Ստոլիպինը, որ հիւանդութեան պատճառով Դումայում ներկայ չէ եղել, ցանկացել է միջադէպի մանրամասնութիւնը տեղեկանալ Գոլովինից։ Պատճառ բերելով իր տկարութիւնը և դէպքի կարևորութիւնը, Ստոլիպինը հեռախօսով խնդրել է Գոլովինին գիշերվայ ժամի 11 և կէսին իր մօտ գնալ։ Գոլովինը գալիս է և մանրամասն կերպով, ստենօգրաֆիական տեղեկութիւնների հիման վրա, պատմում է դէպքը ինչպէս որ պատահել էր։ Խօսակցութիւնից յետոյ Ստոլիպինը ընդունել է, որ Դուման արձակելու համար ոչ մի հիմք չը կայ, բայց նախազգուշացրել է Գոլովինին, որ զինուորական մինիստրը իրան վիրաւորված է զգում զօրքին վիրաւորելու համար, իբրև նրա ներկայացուցիչ։ «Վաղը առաւօտեան ժամի 9-ին,—ասել է Ստոլիպինը,—զինուորական մինիստրը գնում է Ցարսկոյէ-Սելօ հերթական զեկուցում տալու և կասկած չը կայ, որ նա կը զեկուցանէ իր ստացած տպաւորութիւնների մասին։ Գործի շահերի տեսակէտից չափազանց օգտակար կը լինէր, որպէսզի գեներալը լիակատար հասկացողութիւն ունենար իրերի իսկական դրութեան ու մանրամասնութեան մասին։ Ոչ պակաս կարևոր է և այն տրամադրութիւնը, որի տպաւորութեան տակ Ցարսկոյէ-Սելօ կը կը գնայ զինուորական մինիստրը»։ «Ես կը գնամ գեներալ Ռեդիգերի մօտ,—ասել է այն ժամանակ Գոլովինը,—և կը խօսեմ նրա հետ»։ Ստոլիպինը հաւանութիւն է տուել և անմիջապէս զանգահարել է հեռախօսը զինուորական մինիստրի հետ խօսելու համար։ Բայց նա տանը չէ եղել։ «Ֆեօդոր Ալէքսանդրովիչ,—ասել է Ստոլիպինը,—դուք ևս սաստիկ յոգնած էք, գնացէք տուն հանգստացէք, իսկ առաւօտը մի փոքր շուտով գնացէք մինիստրի մօտ։ Ես մի անգամ էլ կաշխատեմ խօսել նրա հետ և նախազգուշացնել նրան»։ Գոլովինը գնացել է և յաջորդ օրը՝ ժամի մօտ 9-ին այցելել է զինուորական մինիստրին և նրան տուել է նոյն բացատրութիւնները, ինչ որ Ստոլիպինին։ Նա աւելացրել է միայն այն, որ արդարացի է համարում Դումայի առաջիկայ նիստում բարձրաձայն արտայայտելու այն յարգանքի մասին, որը անկասկած տածում է Դուման դէպի մեր քաջ զօրքը։ Ինչպէս Դումայի նախագահի տուած բացատրութիւնը, այնպէս և նրա դիտաւորութիւնը՝ Դումային դիմելու յայտարարութեան մասին, բաւարարութիւն է տուել զինուորական մինիստրին, որը խոստացել է այդ բոլորի մասին զեկուցանել Ցարսկոյէ-Սելօյում։ Երեկոյեան Դումայի նիստից տուն վերադառնալով, Գոլովինը գտել է իր սեղանի վրա Ստոլիպինի և Ռեդիգերի այցետոմսերը, որոնք վերադարձրել են այցելութիւնը։

—Զինուորական մինիստրութիւնը միջոցներ է ձեռք առել, որպէս զի ոչ զօրամասերը և ոչ էլ օֆիցերները Զօհրաբեանի ճառին չը հակազդեն, որովհետև մինիստրութիւնը հարցը սպառված է համարում։ Ինչպէս յայտնի է, Զօհրաբեանի հետ պատահած միջադէպը առիթ էր տուել եռանդուն ագիտացիա մղելու բարձր խաւերում Դուման արձակելու համար։ Դեռ ևս Դումայի այն նիստը վերջանալուց առաջ, որտեղ ընդունվել էր զինուորակոչութեան նախագիծը, տեղի էին ունեցել մի քանի մասնաւոր խորհրդակցութիւններ կաբինետի անդամներից մի քանիսի մասնակցութեամբ։ Դրանցից մէկն էլ տեղի էր ունեցել պետական կօնտրօլեօր Շվանեբախի մօտ, որին ներկայ է եղել Պիխնօն։ («Рѣчь»)

—Բազմաթիւ սպառնական նամակներ ստանալուց բացի, Պետական Դումայի անդամ Զօհրաբեանին, յայտնի նիստի յաջորդ օրը, ներկայացել էին մի քանի հոգի և բացատրութիւններ պահանջել, որոնց թւում եղել են ի միջի այլոց զինուորական դասակարգի ներկայացուցիչներ։ Բացի դրանից, պատգամաւոր Զօհրաբեանը մի նամակ է ստացել զինուորական վարչութեան բարձր հաստատութիւններից մէկից, որով բոլոր նաւաստիները բաւարարութիւն են պահանջում։ Զօհրաբեանը գնում է Նորվեգիա։ («Новь»)

—Ծայրայեղ ձախակողմեանները մտադիր են Պետական Դումայի նիստերը վերսկսվելուց հարց բարձրացնել Գոլովինի այն քայլերի մասին, որ նա արել է Դումայի արդէն որոշված արձակման առաջն առնելու։ Պրեզիդիումի կրտսեր անդամներից մէկը, որ պատկանում է սօցիալ-դեմօկրատական ֆրակցիային, լսելով Գոլովինի զեկուցումը Ստոլիպինին և Ռեդիգերին տուած իր այցելութեան մասին, պրեզիդիումում, իր բողոքը յայտնեց այդ այցելութիւնների առիթով։ Սակայն այդ բողոքը պաշտպանութիւն չը գտաւ միւս անդամների կողմից։ («Новь»)

ՄԱՄՈՒԼ

Ապրիլի 16-ի Դումայի նիստում Զօհրաբեանի արտասանած վիրաւորական ճառի առիթով «Новое Время» լրագիրը իր էջերում մի քանի յօդուածներ է նուիրում, ելակէտ ընդունելով այն, որ զօրքը վիրաւորել՝ նշանակում է վիրաւորել ժողովրդին։ Մեղադրել ռուսաց զօրքին վախկոտութեան մէջ, այդ միևնոյն է թէ մեղադրել վախկոտութեան մէջ ռուս ժողովրդին։ Առաջին Պետական Դումայում, ասում է լրագիրը, նպատակ դրեց վիրաւորել ռուսաց զօրքին հրէայ պատգամաւոր Եակօբսօնը, իսկ երկրորդ Դումայում Եակօբսօնի օրինակին հետևեց հայ պատգամաւոր Զօհրաբեանը։

Այժմ այդ դերը յանձն է առել հայը։ Որպիսի խրատական և զգուշացուցիչ նմանութիւն։ Ռուսաց զօրքը պախարակողներից մէկը շառաւիղն է այն փառահեղ զօրքերի, որոնք այնքան աչքի ընկան հրէական երաժշտութիւնից տապալված Երիքօվը գրաւելու և անզէն կանանց ու երեխաներին կոտորելու ժամանակ։ Իսկ միւսը այն ազգի շառաւիղն է, որ տիեզերական կռւի բեմի վրա մի ժամանակ խաղաց հանդէս գալու դերը և այն օրվանից մուրում է իր հարևանների մօտ և արտասուքներ է ուղղում Եւրօպային, աղերսելով տալ իրան օթևան և պաշտպանութիւն։ Շատ ժամանակ է անցել, արդեօք, այն օրից, երբ քրդերը, անկարող լինելով դիմանալ շահագործական կենակցութեան, գրոհ տուին նրանց վրա և հայ փախստականները հազարաւոր ընտանիքներով օթևան գտան ռուսաց սահմաններում՝ ապաւինելով այն սուինների պաշտպանութեանը, որոնց այժմ դաւաճանի անամօթութեամբ ծաղրում է հայկական եկուորը։ Ռուսաց տիրապետութեան ներքոյ չէ՞ր, արդեօք, որ հայերը յափշտակեցին իրանց ձեռքերով ամենահարուստ երկրի գանձերը, խեղդեցին և մասամբ դուրս վռնդեցին ռուս ազգաբնակութեանը և իրաւազուրկ ստրուկներից ու եկւորներից դարձան իրերի դրութեան իսկական տէրը։

Մի ուրիշ համարում, «Զօրքը և պարլամենտը» խորագրի տակ յօդուածում, միևնոյն թերթը Զօհրաբեանի ճառի առիթով ասում է.

Զօհրաբեանի վայրենի ճառը մենք չը պէտք է ձգենք ամբողջ հայ ազգի վրա։ Նա իր ազգի զաւակը չէ, այլ վիժուածքը։ Մեզ համար միայն շատ ցաւալի է՝ թէ ինչու Վրաստանն ու Հայաստանը, որ պարունակում են իրանց մէջ այն չքնաղագեղ, այն վայելուչ յատկութիւնները, չեն կարողանում ռուսաց պարլամենտ ուղարկել իրանց ժողովրդի իսկական ներկայացուցիչներին, ինչու նրանք ուղարկում են իրանց այդ տականքները, որոնք բոլորովին զզվեցրել են մեզ և իրանց տնեցոց անգամ և ժողովրդական, ընիկ տեղական ոչինչ չունեն իրանց մէջ։

Թերթը վշտահար նկատում է, որ բոլորովին իզուր է հայհոյել բիւրոկրատիային։

Բիւրոկրատիան քաշեց բերաւ իր մօտ Կովկասից Բագրատիօններին, Լազրեւներին, Լօրիս-Մելիքօվներին, Տէր-Ղուկասովներին...

Նա կարողացաւ նրանց ընտրել, գտնել և իր շարքերում դնելով, ինչպիսի՞ դիսցիպլինա, տոկունութիւն և ուղղութիւն տուեց նրանց...

Զօհրաբեանին նայելով, որը նոյնպիսի ներկայացուցիչն է Կովկասի, վերջինիս շահերի ու կարիքների արտայայտիչը, մենք կարող ենք գտնել, թէ Ռուսաստանի ինչպիսի ներկայացուցիչներն են նստած Դումայում։

Այդ բոլոր դժբախտութեան պատճառը Թերթը գտնում է ռուսաց դպրոցի արատաւորութեան ու շառլատանութեան մէջ։ Թերթի այդ ատելի արշաւանքը հայերի դէմ՝ սօցիալ-դեմօկրատ պատգամաւորի ճառի պատճառով բաւական չը համարելով, Մենշիկովը շտապում է պակասը լրացնել իր «Դուրս պարլամենտից» յօդուածով։

Հայը մօտ օրերս քիչ մնաց որ սպանէր Դուման,—ասում է նա։ Վտանգը անցաւ, բայց երկար կը տևէ՞ արդեօք։

Եւ դա առիթ է տալիս յօդուածագրին ամբողջ մաղձը թափելու ոչ-ռուս ազգութիւնների վրա, որոնց տիրապետութիւնից անհրաժեշտ է համարում փրկել Ռուսաստանը։

Ռուսաստանը փրկելու համար անհրաժեշտ է, որպէսզի նա վերադառնայ իր ազգային ինքնաճանաչութեանը, իր պարտաճանաչութեան զգացմունքին պատմութեան առաջ։ Այդ պարտականութիւնը հրամայում է, որպէսզի իւրաքանչիւր կենդանի սերունդ գիտակից լինի իր պատմական, իր պետական պարտականութեանը, որը պատկանում է ոչ միայն մեզ, որ դեռ կենդանի ենք, այլ և նրանց, որոնք իրանց կեանքը զոհաբերել են ընդհանրութեան փառքի համար, նոյնպէս և նրանց, որոնց կապված է Ռուսաստանը ապագայում ընդմիշտ։ Իբրև պատասխան այն վիրաւորանքին, որ այլացեղ ամբոխը ուղղում է Ռուսաստանի երեսին օրէնսդրական ամբիօնի վրայից, Ռուսաստանը պարտաւոր է հաստատակամութեամբ և պարզ կերպով ասել այդ պարոններին. «Դուրս պարլամենտից։ Հեռացէք այստեղից։ Այստեղ ձեր տեղը չէ»։ Օտար ցեղերը պէտք է ստանան իրանց ինքնավարութիւնը ռուսաց լեզուի և հիմնական օրէնքների գերիշխանութեամբ միայն։ Օտար ցեղերը պէտք է ստանան քաղաքացիների քաղաքական բոլոր իրաւունքները, բացի այն իրաւունքներից, որոնք տէրերի սեփականութիւնն են կազմում և որոնց մէջ է կայանում լոկ մեր ցեղի գերիշխանութիւնը թագաւորութեան սահմաններում։ Ռուսաց քաղաքացու լրիւ իրաւունքները, civis romanus-ի կոչման նման, չէ կարելի տալ այնպիսի մարդկանց, որոնք բացարձակ կերպով իրանց ռուսներ չեն համարում, արհամարհում են Ռուսաստանը և ատում նրան Եակօբսօնների ու Զօհրաբեանների յիմար խելագարութեամբ։

Ի հարկէ Մենշիկովը չէ մոռանում առաջարկել իր սիրած դեղատոմսը ևս ընտրողական նոր օրէնքներ ստեղծելու միջոցով, որպէսզի օտար ցեղերը այլ ևս ազատ մուտք չունենան պարլամենտ։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Առաջաձոր, (Զիվանշ. գ.) ապրիլի 10-ին

Սրանից մի քանի շաբաթ առաջ, մարտ ամսում, Նպաստամատոյց Յանձնաժողովի և Կուլտուրական միութեան և կամ «Խառն Յանձնաժողովի» մարդիկը հացի նպաստ տուին մեր գաւառի Թարթառ ու Խաչէնի ձորակների գիւղօրայքի բնակիչներին, ընտանիքի ամէն մի անդամին ամսական 16 ֆունտ հաշուած։ Հացի նպաստը՝ ցորենով տալիս էին Սէյիդի-Շէն անունով գիւղում (Շուշու գաւառ), գտնվելով Խաչէնի Ձորակից մօտ 15 վերստ հեռաւորութեան վրա, իսկ Թարթառի Ձորակից մօտ 25 վերստի վրա։ Այդպիսի նպաստ ստացողներից շատերը ուլախ (ձի, էշ) չունենալու պատճառով, ստացած նպաստը, երկու պուդից սկսած մինչև չորս պուդ, մէջքով էին բերում տուն....։ Երևակայեցէք, ընթերցող, զարմանալի բան չէ՞ արդեօք՝ չորս պուդ ցորենը մէջքով՝ 15—20 վերստ տարածութիւն ունեցող ճանապարհով տանելը, այն էլ ինչպիսի վատթար ճանապարհներով, ինչպիսի զառիվայրներով...։ Աղքատ և ուժասպառ գիւղացին համբերութեամբ կրում է, տանում է այդ տանջանքը, միայն թէ իր հարազատ երեխաները սովամահ չը լինեն։ Ծանր բեռան տակ տնքալով, արիւն քրտինքը հեղեղի նման նրա երեսից թափելով, Սէյիդի Շէնից մէջքով նպաստ բերող աղքատը ինքնիրեն քթի տակին փնթփնթում է ասելով. «գահրմար լինի այսպիսի ապրուստը, որ 25 վերստ տարածութիւն ունեցող ճանապարհով ես չորս պուդ ցորենը պիտի մէջքով տանեմ, քաշեմ, ուլախ չունենալու ու աղքատութեան պատճառով։ Միթէ այս հացը կուտվի...։» Թող ընթերցողը ինքը եզրակացնէ, թէ ինչքան թշուառ է մեր լեռնաբնակ գիւղացին, թէ ինչքան կրիտիկական է նրա վիճակը... Նախորդ թղթակցութիւններից մէկում յիշել էի, որ ընտանիքի ամէն մի անդամին ամսական 16 ֆունտ ցորեն տալով՝ հազիւ թէ այդ հաշւով հացի նպաստ տալը բաւականանայ միայն «չոր հացով» կերակրվող տառապեալ ու թշուառ գիւղացուն, ուստի կրկնում եմ և այստեղ, այդ բանը ի նկատի ունենալու համար։

Գարնանացանի ժամանակը ձեռքից ընկնում է, իսկ մինչև այսօր յիշեալ հաստատութիւնների մարդկանց խոստացած սերմացուի նպաստը չը հասաւ այն պատճառով, որ ինչպէս լսում ենք, այդ սերմացուն այժմ գտնւում է Նուխուի երկաթուղու կայարանում և հայերը վախենում են գնալ յիշեալ տեղից այդ սերմացուն բերելու. իսկ յիշեալ հաստատութիւնների, Շուշու Ցանձնաժողովի մասնաճիւղն էլ միջոց չունի իր հաշւով, Թուրքերի միջոցով տեղափոխելու Խանքենդ աւանը կամ Շուշի այդ սերմացուն, որպէսզի յիշեալ տեղերից սերմացուի նպաստ ստանան շրջակայ գիւղօրայքի չունևորները։ Լեռնաբնակ չունևոր գաւառացին տակաւին հաց չունի ուտելու համար։ Նա հացի կարիք ու պակասութիւն է զգալու դեռ երեք ամիս (ապրիլ, մայիս, յունիս), մինչև իր արտերը հնձելը, իսկ նա հացի նպաստ ստացել է մինչև ապրիլ ամիսը (փետրվար ու մարտ ամիսներում)։ Պէտք է լեռնաբնակին հացի նպաստ տալ մինչև յուլիս ամիսը, մինչև իր արտերը հնձելը։ Բացի այդ լեռնաբնակը գարնանացանի համար սերմացու չունի, ուլախ, լծկաններ չունի. ձեռք մեկնեցէք նրան, ո՛վ բարի, ունևոր և մարդասէր պարոններ, բարեգործական ու մարդասիրական ընկերութիւններ, կուլտուրական միութիւններ։ Լեռնաբնակ գաւառացին մինչև իր նորմալ դրութեան մէջ ընկնելը նպաստ է ուզում ձեզանից։

Բ. Զաքարեանց

—

Մարաղա գիւղ, (Ջիվանշիրի գաւառ)

Անտանելի է դառնում մեր դրութիւնը պարբերաբար երևացող հիւանդութիւններից։ Այժմս էլ երևացել է տիֆ հիւանդութիւնը։ Առայժմս հիւանդների թիւը երեք է, որոնցից մէկը առողջանում է, երկուսը ծանր հիւանդ են։ Մեր գաւառի հիւանդանոցն էլ չունի այն յարմարութիւնը, որ այդպիսի հիւանդներին տեղաւորէ իր մէջ, որ գոնէ մնացածներից հիւանդացողներ չը լինէին։ Օրական տասը մարդ է այցելում հիւանդներին իրանց բարեկամներից. նրանք էլ ազատ կերպով կարող են վարակվել։ Մաքրութեան կողմից գիւղը անտանելի վիճակի մէջ է, ուշադրութիւն դարձնող չը կայ, հարկաւոր է միջոցներ ձեռք առնել. գոնէ եթէ հիւանդանոցը չունի յարմարութիւն, կարելի է գիւղում սենեակ վարձել ու այդպիսի հիւանդներին տեղաւորել նրա մէջ և բժիշկը կարող է օրական մի անգամ այցելել։ Մեր գիւղացիներն այնքան հասկացողութիւն չունեն, որ առանց հրամանի բան շինեն, դժբախտաբար հրամայող էլ չը կայ։

Արշակ Յովակիմեան

—

Շուշի, ապրիլի 15-ին

Չորս ամսվայ բացակայութիւնից յետոյ թեմ վերադարձաւ Աշոտ եպիսկոպոսը։ Այսօր կիրակի, Ծաղկազարդի տօնին յայտարարութիւն էր կպցրած պատերին, որով յայտնւում էր, որ թեմիս առաջնորդը քարոզ պիտի խօսի. միևնոյն ժամանակ նոյն օրը առաջին անգամ 70 հոգուց բաղկացած կանոնաւոր քառաձայն խումբը, ղեկավարութեամբ ուսուցիչ պ. Ռուբէն Մանասեանի, պիտի երգէր Ղազանչեցոց եկեղեցում։

Այդ օրը եկեղեցին լիքն էր երկսեռ բազմութեամբ։ Սեղան բարձրացաւ Աշոտ եպիսկոպոսը և ասաց հետևեալը. նախ, ողջունեց իր չորս ամսվայ բացակայութիւնից յետոյ ժողովրդին, յետոյ յայտնեց, որ օրէնքի համաձայն իւրաքանչիւր թեմ իրաւունք ունի ունենալու մի հոգևոր դպրանոց։ Այդ դպրանոցների մշտական նիւթական աղբիւրներն են եղել աշակերտների թոշակագրամը, սրբագրամներ և պսակից ստացվող նուէրներ, բարերար անձնաւորութիւններից նուիրված գումարներ։ Արդէն երկու տարի է, շեշտեց սրբազանը, որ դպրանոցիս միակ նիւթական վերոյիշեալ աղբիւրները սպառվել էին, շնորհիւ Շուշում և գաւառներում տեղի ունեցած հայ-Թուրքական կոտորածի և գեղջական ժողովրդի աղքատիկ կացութեան։ Անցեալ տարի, շարունակեց սրբազանը, դիմեցի Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութեան և նպաստ խնդրեցի յօգուտ դպրանոցի։ Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութիւնը յարգելով խնդիրս՝ ուղարկեց 5000 րուբլի։ Այս ձմեռ մի անյարմար ժամանակ, աւելացրեց սրբազանը, ստիպված եղայ նորից մի ճանապարհորդութիւն կատարել հանգանակութեան համար։ Ձմեռս գալով Թիֆլիս, այդտեղ իմացանք, որ ժողովարարութեան համար զանազան ընկերութիւններ, ինչպէս օրինակ՝ Նպաստամատոյցը, Կուլտուրական ընկերութիւնը փողեր են հաւաքում և որ նրանք պիտի շրջեն Ռուսաստանի քաղաքները ևս հանգանակութեան գործը աւելի ընդարձակելու համար. մենք բաւ համարեցինք բաւականանալ Կովկասի մի երկու քաղաքով։ Հանգանակութեան գործը բաւական աջող է եղել, հաւաքել եմ մօտ 24,000 րուբլու մի գումար, որից 4500 րուբլին, մշտական ամէն տարի ստացվելի գումար է, իսկ մնացեալը ազատ նուիրատուութիւն։ Սրբազանը յայտնեց, որ «Արամազդ» ընկերութիւնը ևս յայտնել է, որ ընկերութեան անդամների ընդհանուր համաձայնութեան դէպքում գուցէ աջողվի տարեկան մշտական նպաստ յանձնելու յօգուտ դպրանոցի 2000 րուբլի։

Վերջում սրբազանը յայտնեց, որ հայ ժողովրդից այնքան էլ ուրախալի լուրեր չէ բերում, շեշտեց, որ անմիաբանութեան ոգին արդէն բուն է դրել մեր ժողովրդի մէջ։ Ժողովուրդը բաժանված զանազան կուսակցութիւնների, միմեանց փսսում են, բամբասում են, անմիաբանութեան, ատելութեան սերմեր են ցանում միմեանց մէջ. խօսեց միաբանութեան մասին, դատապարտեց զանազան խմբերի և կուսակցութիւնների կողմից տեղի ունեցող ճնշումները, կոչ արեց երիտասարդութեան և ժողովրդի բոլոր խաւերին միմեանց հետ ձեռք ձեռքի տուած գործելու, վանելու անմիաբանութեան ոգին, միևնոյն ժամանակ բարեպաշտութեան, բարեգործութեան գործին զարկ տալու և բարենպատակ հաստատութիւնների թիւը աւելացնելու։ Այնուհետև օրհնելով ժողովրդին՝ իջաւ բեմից։

Քառաձայն խումբը բաւականին աջողակ երգում էր, թէև տեղ տեղ թերութիւններ ևս նկատվում են. յուսով ենք, որ դպրանոցի ուսուցիչ պ. Ռ. Մանասեանը այդ թերութիւնները ևս կը վերացնէ։ Մի քանի տեղ վերջին ձայները աւելի խրոխտ են հնչվում, իսկ մի քանի տեղ աւելի թոյլ, որ կարծես թէ միաձայն լինեն երգում։ Աջողակ են, «Սուրբ-սուրբը», «Հայր-Մերը»։ Ամենայն դէպս այդ մասնաւոր անհարթութիւնները յուսով ենք կը վերացվեն։

Լ. Յովսէփեան

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԵՒՊԱՏՕՐԻԱՅՈՒՄ

—

Եւպատօրիա, ապրիլի 12-ին

Վերջապէս, երկար այս ու այն կողմ ընկնելուց յետոյ աջողեցրինք ձեռք բերել բարեգործական ընկերութեան հաստատութիւնը։ Տեղի ունեցաւ ընկերութեան ընդհանուր ժողովը, որն ընտրեց վարչութեան նախագահ՝ պ. Գ. Պալալեանին, գանձապահ՝ պ. Գ. Բուշնեղեանին, սոսկ անդամներ տ. տ. Նախշունեանին և Նեմչէյեանին և պ. Գ. Խաչէկեանին։ Ժողովը որոշեց հեռագրել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ որ նրա անունով Եւպատօրիայում հիմնվի բարեգործական ընկերութիւն. վերջինս «Խրիմեան» է կոչվում յանուն Վեհափառի։ Բացի այդ որոշվեց ընկերութեան բացումը տօնել մի երեկոյթ-հանդէսով, որից ստանալիք զուտ արդիւնքը նպատակայարմար համարվեց ուղարկել կովկասեան արկածեալներին։

Ընդհանրապէս այս նորածին ընկերութեան տեղս մեծ յոյսեր են վերագրում և կարծում են, որ հասարակական կենցաղի բարեփոխութեանը մեծ զարկ կարող է տալ։

Այստեղ մինչև վերջին ժամանակներս համարեա ձմեռ է եղել, ծովը այնքան սաստիկ ալեկոծվել էր, որպիսին, ինչպէս պատմում են, տեսնված չէ եղել վաղուց։ 27 հատ առագաստանաւ ալիքները այնպէս են զարնել ափերին, որ ոչ մի ամբողջ կտոր չէ մնացել նրանցից. բացի այդ՝ մարդկային զոհեր էլ եղել են. 9 հոգի խեղդվել են, որոնցից մի քանիսը անհետ կորել են ծովի մէջ։

Մինաս

ԹԱՏՐՈՆԸ ԱԽԱԼՑԽԱՅՈՒՄ

—

Ապրիլի 14-ին

Չեմ կարծում Ախալցխան երբ և իցէ թատրոնի կողմից աւելի բախտաւոր եղած լինի, քան այս տարի է։ Ճիշտ է, այստեղ եղել են շատ դերասաններ, մինչև անգամ Ադամեանը իր տաղանդը ցոյց է տուել մեր ժողովրդին, բայց այդ բոլորը կարճ ժամանակով, այնպէս որ չէ կարելի ասել, թէ դրանք մի առանձին խորը հետք թողած լինեն։ Այս տարի Ց-րօնը, շնորհիւ դերասան Ն. Յովհաննիսեանի, շատ օգտակար և սիրելի դարձաւ մեր հասարակութեան համար. նրա «Կոռսազօ», «Թաշճեանը», «Քինը», «Պանսը» և ուրիշները դեռ շատ երկար կը մնան մեր յիշողութեան մէջ։ Իսկապէս որ թատրոնական գործի տեսակէտից այս տարի աջող տարի էր։

Ամբողջ տարիներով տեղական սիրող երիտասարդների խաղերը չեն կարող բեմի նշանակութիւնը բարձր պահել. հարկաւոր են հմուտ դերասանների երբեմնակի այցելութիւններ, որպէսզի հասարակութիւնը կրթվի և նրա ճաշակը ազնուանայ։ Մեր քաղաքի սիրողները գուցէ շատ աւելի եռանդուն են, քան կարող են լինել սիրողները ընդհանրապէս, բայց որ նրանք, ինչպէս ասում են, տեղովը կրակ կտրվեն, դարձեալ սիրողութիւնից դէնը չեն անցնի, այսինքն անկարող են դերասանի գործ կատարել. այդ արդէն անհերքելի է։ Եւ մեր քաղաքի այս զգալի պակասը այս տարի լրացած է յանձին դերասան Յովհաննիսեանի։ Սիրողները նրանից շատ օգտվեցին։

Մենք «Մշակի» էջերում պարբերաբար տուել ենք Ախալցխայի ներկայացումների նկարագրութիւնը։ Այս անգամ կանգ կառնենք վերջին շաբաթվայ ընթացքում (ապրիլ 6 և 8) եղած երկու ներկայացումների մասին։ Այդ ներկայացումները յօգուտ դպրոցի էին. մէկը մանկական գրադարանի և բեմի օգտին, միւսը չքաւոր աշակերտների։

Երկու ներկայացումներն էլ, կարելի է ասել, իրանց ծանրութեամբ ընկել էին ուսուցիչների վրա, բայց այս չը պէտք է հասկանալ ամբողջ խմբի համար. նրա մեծ մասը այս տեսակէտից առաջնորդվում է անտարբերութեան, անհետաքրքրութեան (գուցէ և անկարողութեան) սկզբունքով։ Մի քանի ուսուցիչներ, մասնակցելով երկու տարբեր պայմաններում, տարբեր ձևերով եղած ներկայացումներին, գլուխ բերին աջողութեան մի մասը։ Այդ երկու ներկայացումներին դրսից մասնակցում էին մէկում դերասանը, միւսում մի քանի սիրողներ, մնացած 20-ից աւելի դերակատարները ուսուցիչ—ուսուցչուհիներն էին, մեծ մասը 2 և աւելի դերեր վերցնելով։ Ճիշտ է, նրանք միշտ մասնակցել են նախորդ ներկայացումներին, սակայն այս անգամ երկու իրար հակառակ կողմերով կարող եղան գլուխ բերել նոյն նպատակի համար երկու ներկայացում։ Զուր չէր, որ մեր նախորդ թղթակցութեան մէջ յայտնել էինք, թէ ջրբաժանը մեր ուս. խմբին եռանդ է բերել։

Ներկայացումներից առաջինին մասնակցում էր դրսից միայն դերասան Յովհաննիսեան. խաղացվեց Կարապետեան դպրոցի բեմի վրա «Սուտ ճգնաւորը» և «Խախտված պլենը»։ Երկուսում էլ դերասանը հիանալի խաղաց. դահլիճի հասարակութիւնը մոռացաւ Մեծ պասը, պաշտպանութեան օրերը, խաղը մեծ զուարճութիւն պատճառեց հասարակութեանը։ Միջնարարներին նուագում էր տեղիս նուագածուների յայտնի խումբը, որ շատ անգամ յատկապէս հրաւիրվում է Թիֆլիս և ուրիշ քաղաքներ։ Կարգապահութիւնը հիանալի էր։ Դերասանը մի քանի անգամ վարձատրվեց ծափահարութիւններով։

Զանազան պատճառներով տոմսակները միջակ գներով էին նշանակված. զուտ արդիւնքը եղաւ 700 րուբլի, որից 40-ը յատկացվեց իսկոյն մանկական գրքեր բերել տալու, իսկ 30-ը բեմին։ Այդքան չնչին գումարով անշուշտ չէ կարելի աղքատ գրադարանը հարստացնել։ Դպրոցի ծախսերի հաշիվը 21 հազարի է համնում և այդ անհագին գումարից 21 կոպէկ չէ յատկացված դպրոցի գրադարանին. չեն ստացվում ոչ թերթեր, ոչ մանկավարժական հրատարակութիւններ... սակայն, ինչպէս Պարոնեանն է ասում, «որձե կրանսս»... Աշակերտները գիրք են ուզում կարդալ, իսկ յարմար գիրք չը կայ. դրա համար ուսուցիչները խնդրեցին դերասանին մասնակցելու և գլուխ բերելու մի ներկայացում յօգուտ խղճուկ մանկական գրադարանի։

Երկրորդ ներկայացումը եղաւ երկու օր յետոյ, ակումբի դահլիճում, ուսուցիչների և սիրողների ջանքերով։ Խաղացին Մոլիէրի «Ակամայ բժիշկը» և ռուսերէնից թարգմանված «Ընդունելութեան օրը» վօդեվիլը։ Առաջինը բաւական թոյլ անցաւ. պակասում էին շորեր։ Մոլիէրի գրուածքների համար անհրաժեշտ են շորեր, միջին տարվայ ֆրանսիական գոյնզգոյն—ղեղի բեղի տարազ. առանց դրան համ չունի. նրա բժիշկները, փիլիսոփաները, գիտնականները ունեն տիպիկ հագուստ՝ երկար փէշերով, տարօրինակ գլխարկներ, մի խօսքով նրա պիեսների համար հարկաւոր է առանձին տեսակի շորերի ցուցակ։ Բժշկի դերը կատարում էր մեր սիրողների մէջ աչքի ընկնողներից մէկը, պ. Վ. Բարսեղեանը։ Նա թէև բոլորովին սխալ ձևով էր ըմբռնել դերը, բայց դարձեալ իր խաղով բաւականութիւն պատճառեց հասարակութեան։

Շատ կենդանի և աշխոյժ անցաւ վօդեվիլը. իրանց խաղով առանձնապէս աչքի ընկան և բեմ կանչվեցին օր. Կ. Գուլյեանը և պ. Յ. Աղնաուրեանը (երկուսն էլ ուսուցիչ)։

Շնորհակալութեան արժանի են մի քանի անձնաւորութիւններ, որոնք կարողացան մի քանի ժամվայ ընթացքում տոմսակները վաճառել՝ տները ման գալով, որով ներկայացումը չը յետաձգվեց։ Այս օրինակը ցոյց է տալիս, որ եռանդը շատ բան կարող է անել։ Լաւ կը լինէր, որ եռանդը ինքնաբուղխ լինէր, ազատ ներքին ու արտաքին նեղ դրդումներից։

Մուտքի կողմից երկրորդը աւելի աջող եղաւ. զուտ արդիւնք մնաց 96 րուբլի, յատկացվեց չքաւոր աշակերտների հագուստի։

Դերասան Յովհաննիսեանի հեռանալը թոյլ չը տուին մի խումբ ուսուցիչներ, որոնք անհրաժեշտ են համարում նրա ներկայութիւնը մեր հասարակութեան համար. այս շատ խելացի վարմունք է նրանց կողմից։ Անձնական մասնաւոր հաշիւների պատճառով չէ կարելի քաղաքը զրկել մի շնորհալի դերասանի ներկայութիւնից. մեր հասարակութիւնը վարժվել է դերասանի ներկայացումներին, նա պէտք է, որքան կարելի է, ուշ հեռանայ մեզանից։ Ուսուցիչները խոստացել են աջակցել նրան գլուխ բերելու մի քանի ներկայացումներ Զատկից յետոյ. առաջին խաղը կը լինի «Անպատիժ չեն ծնվում» 3 գործ. դրաման։ Սիրողների խումբը մի քանի ուսուցիչների մասնակցութեամբ մտադիր է տալ մի երկրորդ ներկայացում յօգուտ հայ սովեալների։

Երկու խմբին էլ աջողութիւն ենք ցանկանում։

Դերասանը երեք ամսից ի վեր իր օգտին ներկայացում չէ տուել։ Զատկից յետոյ առաջին ներկայացումը նա տալիս է «Ախալցխայի Հայուհեաց Ընկերութեան» օգտին. խաղալու է ուսուցիչների մասնակցութեամբ՝ «Անպատիժ չեն ծնվում» պիեսը։ Ինչպէս երևում է պ. Յովհաննիսեանը օդով է կերակրվում. հապա իր օգտին երբ է խաղալու. կանանց ընկերութեան վրա մեծ բարոյական պարտականութիւն է ընկնում, որ նրանք նպաստեն դերասանի ներկայացմանը, որին ուսուցիչներից մի քանիսը սիրով մասնակցելու են։

Կանանց ընկերութեան մասին միւս անգամ։

Գալուստ

ԴԱՀԻՃ ԱՄՈՒՍԻՆԸ

—

Շնող գիւղ, ապրիլի 18-ին

Անցեալ շաբաթ գիւղի «Ջոր Բունչու Թաղ» կոչված մասում կատարվել է մի սոսկալի ոճրագործութիւն, որը իր տեսակի մէջ բացառիկ երևոյթ կարելի է համարել։

Գիշերվայ ուշ, յայտնի չէ որ ժամին, իր տան մէջ մի ամուսին զանազան մասերում սրի անթիւ հարուածներ հասցնելով դաժանաբար սպանել է իր կնոջը, առաջին հարուածով դաշոյնը խոր ցցելով նրա փորը։ Մահվան հետ մաքառող անպաշտպան զոհը, հարուածներից արգելք լինելու միջոց չունենալով, երկու ձեռքով սեղմում է վէրքի խորքից դուրս հանված մերկ սուրը, որը ամբողջապէս կտրում է նրա ձեռքերը... Կտրատված են նաև մատների ծայրերը եղունգներով և անթիւ վէրքեր հասցրած մարմնի բոլոր մասերում, որոնց թիւը շատութեան պատճառով ճշտութեամբ թւել անհնարին է եղած։

Վէրքերի հետազօտութիւնից երևացել է, որ վէրքերը հասցրված են երկու տեսակի սրերով, որը և առիթ է տալիս կարծելու, որ սպանութիւնը մի քանի հոգի են կատարել։ Սպանութիւնից օրեր առաջ զոհը, զգալով իր գլխի գալիքը, յայտնել էր, որ իրան սպանելու են, բայց նրա այդ խօսքերը բանի տեղ չը դնելով՝ միշտ «ոչինչ չի լինի» ասելով հանգստացրել են բարեկամ-խնամի մարդիկ և խրատել, որ «մարդին հնազանդ լինի», մինչև որ այդ հնազանդութիւնը նրան սրախողխող կանէր... Ահա թէ ինչով են վերջանում խելօք քեղխուդա-բարեկամների սպանական խրատները...

Սպանութեան բուն շարժառիթը դեռևս պարզված չէ։ Արմատը սակայն պիտի որոնել այնտեղ, որտեղ կնոջից պահանջվում է ոչ թէ ամուսնական սէր, յարգանք, այլ բռնի հնազանդութիւն և անպայման հնազանդութիւն։

Ոճրագործը բանտարկված է։

Բ. Մկրտումեանց

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Ապրիլի 17-ին

Ամսիս 15-ին քաղաքային խորհրդարանի դահլիճում կայացաւ «Արհեստաւորաց և մանր փոխատու խնայողական ընկերութեան» բանկի արտակարգ ժողովը, որը մի անգամ ևս եկաւ խրատելու իրանց հասկացող ենթադրող և մինչև անգամ բարձրագոյն կրթութիւն ունեցողներին, որ հասարակական գործը չը պէտք է դարձնել իրանց խնամիներին պաշտօններ տալու տեղ։

Ինչպէս յայտնել էի նախորդ նամակովս, որ անտաղանդ ղեկավարների պատճառով բանկը ողբալի դրութեան էր հասել և քիչ էր մնում կորստի ենթարկվէր, այնուամենայնիւ մեր հասարակութեան գործը մենաշնորհ դարձնող պարոնները հաւաքվել և հարց էին դրել գործից դուրս շպրտելու խորհրդի ամբողջ կազմը, որ նրանց կարծիքով արգելք էր լինում իրանց բարեկամ պաշտօնեային չաղ ռոճիկ տալ։ Այդ պատճառով հաւաքված ժողովը, որին մասնակցելու եկել էր հասարակ դասին պատկանող անդամների մեծամասնութիւնը, նոյն ժողովում՝ իր միաձայն վճռով՝ յայտնեց իր արհամարհանքը այդ պարոններին, որոշելով ջնջել վաստակի 20%, որ այդ բարեկամների նախկին ժողովը վճռել էր տալ վարչութեան անդամներին, ինչպէս և անտեղի կերպով գանձապահին տուած 100 ր.։ Այդ որոշումը այնպէս սաստիկ հարուածեց մեր պարոններին, որ նրանցից մէկը, որը քաղաքային վարչութեան մէջ մի խոշոր պաշտօն ունի, մոռանալով իր բարձրագոյն կրթութիւն ունենալը և անկարող լինելով տանել, որ արհեստաւոր և հասարակ դասակարգը այդպիսի մի հարուած վստահանում է հասցնել իրանց մեծապատւութեանը, թռչկոտում էր սեղանների վրա և գոռգոռալով աշխատում էր բարձր տեղից ազդել ժողովականների վրա և հասնել իր նպատակին։ Դրա արժանաւոր պատասխանը եղաւ այն, որ ամբողջ ժողովականները զայրացած բացականչեցին՝ «դուրս, դուրս»։ Ցաւալի էր տեսնել, թէ ինչպէս այդ տեսակ մարդիկ ոչ մի միջոցի առաջ կանգ չառնելով աշխատում էին ծառայեցնել հասարակական գործը իրանց անձնական կրքերին և բարեկամների շահերին ու, կուրացած այդ ձգտումով, տգեղ արարքներով, ժողովը փոթորկոտ էին դարձրել։ Բայց և շատ մխիթարական է, որ մեր հասարակ ժողովուրդը հասել է այնքան գիտակցութեան, որ կարողանում է ազատել իր բարեկամներին ոչ բարեկամից ու բուռն դիմադրութիւն է ցոյց տալիս դրանց արշաւանքներին՝ պաշտպանելով իր սեփական հասարակական շահերը։ Համեմատելու համար թէ դրանց և թէ միւս հասարակ ժողովրդին, բաւական է յիշել, որ դրանք պահանջում էին ամբողջ խորհրդի հեռացնելը, որ համազօր էր բանկի փակմանը, այն ինչ խեղճ, նիւթապէս և բարոյապէս հարստահարված հասարակ ժողովուրդը իր ձայնը խնդրում էր միայն յիշված տոկոսների ջնջելը, որ մի աշխոյժ բողոքելի թէքա էր մի քանիսի համար ի դէպս նոյն արհեստաւոր և չքաւոր անդամների։

Գ. Աղաղաղեանց

ՄԻ՞ԹԷ ԱՐԴԱՐԱՑՐԻՔ ՉԷՔ

(Նամակ խմբագրութեան)

Եգոր Տէր-Բարսեղեանի որդու յափշտակման և նորից Դաշնակցութեան ձեռքով իր ծնողներին յանձնելու խնդիրը հասարակութիւնը այսպէս փակեց.—«իրանք տարան ու իրանք էլ բերան»։

Այդ լակոնական խօսքերը բնորոշում են կատարված գործի ամբողջ էութիւնը և շատ բնական է, որ հասարակութիւնը երբեք պատարկ եզրակացութիւնների վրա չէ հիմնում իր կարծիքը։

Մի կողմ թողնելով դեռ այն հանգամանքները, որոնք, որպէս մութ թելեր, այդ կեղտոտ գործը կապում են Դաշնակցութեան անուան հետ, վերջերս տարածված մի պաշտօնական թուղթ եկաւ աւելի ևս փարատելու եղած կասկածները։ Ահա թէ ինչ է ասում նա. «Յատուկ յանձնաժողովի ձեռքով կատարված քննութիւնից երևաց, որ շանտաժի հերոսներից դաշնակցական են երկուսը—Մարտիրոսն ու Ալէքսանը։ Գործի քննութիւնից և վկաների գրաւոր ցուցմունքներից հաստատված և ապացուցված է, որ ամբողջ գործը կազմակերպել ու ղեկավարել է Մարտիրոսը, իսկ Ալէքսանը եղել է միմիայն գործին աջակցող»։ Այսինքն ոչ աւել և ոչ պակաս, մարդայափշտակութեան այդ զզուելի գործը ձեռնարկել ու ղեկավարել է մի դաշնակցական, իսկ նրան աջակցել է մի ուրիշ դաշնակցական։

Դատարանական յատուկ յանձնաժողովը, որ առաջ եկաւ քննելու այդ գործը, ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի միջոց Դաշնակցութեան ճակատից սրբելու քսված արատը, և նա երբեք չէր կազմվի, եթէ ի հարկէ չը լինէր հասարակական բուռն կարծիքի ճնշումը։ Խիստ տհաճելի և անախորժ մի պարտականութիւն էր դա, որ ընկնում էր դաշնակցական կազմի վրա, որը հարկադրված էր նոյնիսկ արդարանալու համար որոշ խոստովանութիւն անել, քանի որ փաստերն ակներև էին ու պերճախօս։

Երկար յապաղումներից յետոյ, վերջապէս, լոյս տեսաւ թուղթը, որ պիտի բաւարարութիւն տար լարված կարծիքներին. սակայն այդ թուղթը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ բիւրոկրատավարի կազմված մի հաղորդագրութիւն, որտեղ Դաշնակցութիւնը իբրև «արդարադատ» մի մարմին, հանդէս է գալիս իր պատժական վճիռներով իր շարքերին պատկանող ըմբոստ «անհատների» վերաբերմամբ։ Դա Դաշնակցութեան հին երգի անվերջ կրկնութիւնն է—ամեն մի երևոյթ չեզոքացնել, վերագրել «անհատների» և իր պրեստիժը բարձրացնելու համար պոլիցիականօրէն դուրս գալ նրանց դէմ պատժական ուկազներով։

Վերցնենք մի րոպէ, որ դրանք անհատներ են, բայց չէ՞ որ հէնց այդ անհատներից է բաղկանում կուսակցութիւնը, չէ՞ որ անհատներն են, որ իրանց բարոյական գործունէութեան դրոշմը կնքում են այն կուսակցութեան ճակատին, որի բովարանում թրծվում են։ Դաշնակցութեան պատմական ամբողջ շրջանը յանգվում է տարաբախտաբար միևնոյն ընդհանուր բնութեան և հայեցակէտի սխեմի վրա, որի թմբրում ահա թրծվել են այն Մարտիրոսներն ու Ալէքսանները, որոնք վերջը հրապարակ են գալիս շանտաժի քաջագործութիւններով։ Այն մարդիկ, որոնք փախցրել են մանկանը և գիւղից գիւղ, տնէ տուն շրջեցրել, նոյնքան յայտնի զինուորներ ու դաշնակցական են եղել, որ ամենքը լաւ են, վախեցել են ծպտուն հանել, լաւ ճանաչելով պարագլուխների և շանտաժիստների ովքեր լինելը։ Նրանք այդ շանտաժիստների մէջ հաւատացել են Դաշնակցութիւնը և Երևանի նման խուլ քաղաքում ու գիւղերում ամբողջ շաբաթներով մի անմեղ երեխայ են թաքցնում և ոչ ոք չէ համարձակվում տեղը յայտնել։ Բացի այդ, թուղթը մի այլ և կարևոր բան ևս մատնում է հասարակութեանը, թէ վեց շանտաժիստ ձեռնարկու պարագլուխներից բացի «եղել են նաև գործին տեղեակ անհատներ», որոնց և դատարանը «արդարացրել է»։ Ընթերցողներ, գիտէ՞ք ովքեր են դրանք.—դաշնակցական թէօրետիկներ ու վարժապետներ։ Նրանք վաղօրօք իմացել են շանտաժի մասին, նոյնիսկ երեխայի տեղը և չեն ասել։ Նշանակում է միևնոյն դաւադիրները, շանտաժի համախոհները, որոնց Դաշնակցութեան դատարանը արդարացրել է։ Ռուսական բիւրօկրատիան էլ այդպէս է վարվում միշտ. նա պատժից միշտ ազատ է պահում իր լիդերներին և ռուսական բանտերը միշտ լցնում ու լցնում է հասարակ մահկանացուներով. բայց ով երբ և իցէ ժողովրդից պատժում են այդ չեֆերից մեկին, կա-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 25-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

II

Եւ ահա 1888 թւին ընկերութեան վարչութիւնը ընդհանուր ժողովի թոյլտւութեամբ վճռեց բանալ կար ու ձևի դպրոց, այն նպատակով, որպէսզի Սուրբ Նշանի դպրոցի դասընթացը աւարտողները փոխադրվեն այնտեղ։

Շնորհիւ ընկերութեան ամենահին անդամուհի Վ. Գ. Ռօտինեանի, որ ստանձնել էր դպրոցի կառավարչուհու պարտականութիւնը (8 տարի), և նրա աշխատակից—վարչութեան անդամուհիների անձնուէր ջանքերին, այդ դպրոցը տարէցտարի սկսեց աւելի ու աւելի կատարելագործվել։ Երկու բաժանմունքից նա դարձաւ 3, 4, իսկ յետոյ արդէն 5 դասարան ունեցող պրոֆեսիոնալ դպրոց, որը ներկայումս իրաւունք է տալիս անվճար վարպետուհի լինելու։

Այդ համակրելի գործին աջակցող հանդիսացաւ նոր սերունդը նոյնպէս։ Այն գործչուհիների մէջ, որոնք ձրի կերպով իրանց ծառայութիւնն էին առաջարկում զանազան առարկաներ դասաւանդելու համար, կային ընկերութեան հիմնադիր անդամուհիների աղջիկները կամ փոքր քոյրերը։ Պրոֆեսիոնալ կրթութիւնից բացի, ընկերութիւնը հոգս էր տանում տալ իր սանուհիներին մտաւոր զարգացում, գիտելիքներ զանազան գիտութիւններից, պաշտպանվելու կարողութիւն կեանքի բոլոր պայմանների մէջ։

1890 թւին ընկերութիւնը ստիպված եղաւ դարձեալ յարմարվել հանգամանքներին։ Իշխանութեան կողմից առաջարկվեց բոլոր բարեգործական հաստատութիւններին մի ընդհանուր նորմալ կանոնադրութիւն, որը բաւականաչափ կրճատում էր ընկերութեան գործունէութիւնը և փոքրացնում էր նրա ապագայ աջողութիւնների շրջանակը։

Ապա այդ հանգամանքներից ստիպված հարկ եղաւ վերացնել գիտական հանրակրթական առարկաների դասարանները և բաւականանալ միայն պրոֆեսիոնալ արհեստանոցով։ Կարելի եղաւ ընդունել միայն 14 տարեկանից ոչ պակաս երեխաների, որոնք պէտք է իմանային գոնէ ծխական դպրոցի առաջին դասարանի դասընթացը։ Պարապմունքները բացառապէս լինում էին պրոֆեսիոնալ առարկաներից. 1) սպիտակեղէն, կար ու ձև, 2) հարթիւկար, 3) մանկական սպիտակեղէն, 4) մօդնի հագուստներ կար ու ձև։ Ընկերութեան պրոֆեսիոնալ դպրոցում մնալով 5 տարի, աշակերտուհին կարող է իր մասնագիտութիւնը սովորել այնպիսի գիտելիքներ, որ կարող է բաւարարութիւն տալ ժամանակի բոլոր պահանջներին։ Նրանք աւարտում են վարպետուհու իրաւունքով։ 1888 թւականից սկսած 19 տարվայ ընթացքում աւարտել են դասընթացները 153 աշակերտուհիներ վարպետուհու իրաւունքով։ Նրանցից մի քանիսը մնացել են նոյն դպրոցում իբրև ուսուցչուհիներ, ուրիշները բաց են արել սեփական արհեստանոցներ, երրորդ մասը գնացել է աշխատելու գաւառներում, չորրորդը՝ տներումն էին ընդունում պատուէրներ և դրանով պահում էին իրանց և թէ իրանց բազմամարդ ընտանիքը։

Այդ 19 տարվայ ընթացքում ընկերութիւնը ծախսել է դրա համար 80,388 ր. 1. կ., դրանից դուրս գալով 30 հազար րուբլի մուտքը, որ ստացվել է աշակերտական աշխատանքներից, նշանակում է 50,388 ր. 1 կ.։

Ընկերութիւնը նպատակ է ունեցել իր սանուհիներին տալ ոչ միայն մասնագիտական գիտելիքներ, այլ և հոգ տանել նրանց բարոյական դաստիարակութեան մասին։ Ամէն կերպ աշխատում էր դրամական նպաստներ տալ, խորհուրդներով, նրանց ընտանեկան գործերին միջամտելով աջակցութիւն ցոյց տալ ընտանեկան ձախորդութիւններից տառապող շատ շատերին։ Ընկերութիւնը այդպիսիների համար տօներին կազմակերպում է ներկայացումներ, դրսափներ, մօդական լոտերեաներ, պատմութիւններ, դասախօսութիւններ ևայլն, [illegible] կեանքի մէջ։

Զբաղեցնել աղջիկներին ձեռքի աշխատանքի սովորեցնելու միջոցով ինքնուրոյն գոյութեան պաշտպանութեան հարցը ժամանակի ու կեանքի կողմից թելադրված ամենակարևոր հարցերից մէկն է։

Եւ իսկապէս, կարելի՞ է միթէ համեմատել դժբաղդ աղջկերանց (այլև հէնց ամենքի) վիճակը առաջներում և ներկայ ժամանակներում։ Պրոֆեսիոնալ դպրոցը տալիս էր միջոցներ կնոջը բարեկեցիկ պայմաններ ընտանեկան կեանքում, նա պաշտպանվում էր այն կանանց գոյութիւնը, որոնց ճակատագիրը տնօրինել էր կոյր կամ այլի մեայ։ Նա բարձրացրեց մարդկային անձնաւորութիւնը, բարձրացրեց աշխատանքի նշանակութիւնն ու արժէքը և աւելացրեց կրթութիւնը։

Այժմ արհեստներ—պրոֆեսիաներ սովորած աղջիկը չէ կարող ծանր բեռ լինել իր ծնողների համար, նախանձելի իր ամուսնու համար։ Նա պարծենալով կարող է անւանվել իր չարքաշ մարդու ընկեր, հօր օգնականուհի և ընտանիքի յենարանը։

Չբաւականանալով միայն զուտ մասնագիտութիւններով, ընկերութիւնը փորձեց մտցնել դպրոցում գիտութեան ուրիշ ճիւղեր ևս, օրինակ 1) տ. Վ. Ռօտինեանի նախաձեռնութեամբ և ընդհանուր ժողովի թոյլտւութեամբ ու հաւանութեամբ բացվեցին խոհարարական դասընթացներ (кулинарные курсы), որոնց նպատակն էր իրանց սանուհիներին պատրաստել հմուտ տանտիկիններ, որոնք կարող լինէին որոշ չափով լաւ պատրաստելով հանդերձ համեմատաբար քիչ փող ծախսել տան տնտեսականի վրա։ Դժբաղդաբար այդ դասընթացները գոյութիւն ունեցան միայն 1892 թւից մինչև 1897 թիւը։ Այդ հինգ տարվայ ընթացքում սովորել են խոհարարական դասընթացներում 215 հոգի (բացի ընկերութեան սանուհիներից եղել են կողմնակի աղջիկներ ևս)։ Ընկերութիւնը այդ գործի համար այդքան ժամանակամիջոցում ծախսել է 5213 ր., իսկ մուտք ունեցել է 5773 րուբլի։ 2) 1899 թւականին դպրոցին կից ընկերութիւնը բաց արեց լուացատուն։ Մի կողմից դրանով ուզում էին իրանց ձեռագործներին համար անհրաժեշտ աշակերտուհիներից պատրաստել հմուտ հարթիչողներ (ուծւող անոնցներ, որպիսիների պահանջը նոյն իսկ այժմ էլ սաստիկ զգացվում է), իսկ երկրորդ՝ աշխատանք տալ այդ դժբաղդ, չքաւոր կանանց, որոնք քանիցս անգամ դիմել էին ընկերութեանը նպաստ խնդրելով։

Երևի մի որոշ դասի պատկանող հայուհիները դեռ ևս չէին հասել զարգացման այն աստիճանին, որ ամեն մի ազնիւ պրոֆեսիայի, արհեստի մէջ կարողանային տեսնել մարդու աշխատանքի միջոց։ Դատապարտելի էին համարում տալ իրանց աղջիկներին «լուացարարութիւն» սովորելու, իսկ աղքատ, կարծացուրկ կանայք տարօրինակ էին գտնում լուացարարական գործը սովորելու համար ժամանակ կորցնել, քանի որ նրանցից ամեն մէկը առանց դպրոց իսկ մտնելու օրավարձ լուացարարութեամբ աշխատում էր օրական 40—50 կոպէկ։ Ի հարկէ, նրանք չէին կարողանում ըմբռնել՝ թէ որքան այդ դպրոցը կատարելագործէր նրանց աշխատանքի գնահատութիւնը։

Ահա թէ ինչու ընկերութիւնը կարճ ժամանակից յետոյ, փակելով կրկին, վերացրեց այդ բաժանմունքը։

Լուացարանը գոյութիւն ունեցաւ երեք տարի միայն։ Ծախսեց այդ գործի համար 1020 ր. 74 կ., այն ինչ մուտք ստացաւ ընդամենը 392 ր. 80 կոպէկ։

Ընկերութիւնը իր մասնագիտական գործունէութիւնից բացի, այդ 25-ամեայ գործունէութեան ընթացքում արձագանք է տուել հայ ազգաբնակութեան բոլոր կարիքներին, ինչպէս քաղաքի իրա մէջ, այնպէս և գաւառներում։ Տուել է դրամական նպաստներ.

1) Գաւառական և քաղաքային եկեղեցական-ծխական աղքատ դպրոցներին 1350 ր.։

2) Զանազան ուսումնարանների կարիք ունեցող աշակերտներին՝ 3717 ր. 28 կոպէկ։

3) Ծննդեան և Զատկի տօներին միանւագ նպաստներ է տուել Թիֆլիսի ամենաչքաւոր հայ ազգաբնակութեանը՝ 4176 ր. 42 կոպ.։

4) Ծխական դպրոցներում վարժուհութիւն անելու նպատակով ցենզի իրաւունք ստանալու համար չունևոր աղջիկներին տուել է 425 րուբլի։

Այդպիսով մեր առաջ կանգնում է Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան 25-ամեայ գործունէութեան բարերար արդիւնքը։

Թող բարգաւաճէ ու կեցցէ երկար տարիներ այդ համակրելի ու օգտակար ընկերութիւնը։

Թող ընկերութեան անդամուհիները այդ անշահախնդիր, անձնուէր վերաբերմունքը ծառայէ որպէս գեղեցիկ օրինակ ընկերութեան սանուհիներին ուրիշի թշուառութեան, ուրիշի կարիքներին կարեկից լինելու համար։ Կարծում եմ և իմ փափագը, որ ինձ հետ միասին, ի հարկէ, տածում են առանց բացառութեան ամենքը, որպէս զի ընկերութեան աշակերտուհիները նոյնպէս, ինչպիսի դրութեան մէջ էլ վիճակված լինի նրանց ապրելու իր ընտանեկան բոյնի մէջ, թէ նրանից դուրս, միշտ էլ յիշեն, որ ապրել ու աշխատել ոչ իր համար միայն՝ քրիստոնէական ամենաբարձր պարտականութիւնն է, այլև նրա կատարելը, ուրիշների համար ևս օգտակար լինելու գիտակցութեան մէջ է կայանում իսկական բաւականութիւնը մարդու և ազնիւ մարդու համար։

Իսկ վարչութեան ներկայ կազմին մաղթում եմ.—որպիսի անկեղծ բաւականութեամբ, որպիսի անկեղծ ուրախութեամբ ես կարդում եմ 1907 թւին դարձեալ վարչութեան անդամների թւում Վ. Ռօտինեանի, Մ. Խատիսեանի, Ն. Ղամբարեանի ծանօթ, փայլուն անունները։

Ես կարծում եմ, ընկերութեան անդամներից ոչ մէկը չէ կարող այնքան շատ լաւ զգալ իրան այդ 25-ամեակի հանդիսաւոր օրը, որքան վերոյիշեալ անձնաւորութիւնները։

Որքա՜ն պայծառ երազանքներ, որքա՜ն սև ամպեր, փոթորիկներ և մռայլ օրեր են նրանք վայելել այդ 25 տարվայ ընթացքում։ Հասան վերջապէս այն պայծառ օրին, տեսնում են ահա հասարակական հէնց այն տրամադրութիւնը, այն ձգտումը դէպի լոյսը, ընդհանուր ձգտումը դէպի վերածնութիւնը, այն բուռն ձգտումը դէպի լուսաւորութիւնը, ինչպէս և այն ժամանակ—25 տարի սրանից առաջ, որի ազդեցութեան ներքոյ հիմնեցին այդ համակրելի ընկերութիւնը։

Նոր կեանքի արշալոյսին մաղթենք երիտասարդութեանը, որոնք, երևի, նոյնպէս տոգորված են իրանց հայրենակից կանանց սեռի բարոյական ու մտաւոր մակերևոյթը բարձրացնելու ցանկութեամբ, շարունակել այդ համակրելի գործը և իրանց երիտասարդական եռանդով թարմութիւն ներշնչելով՝ լուսաւորել ընկերութեան բոլոր ստուերապատ տեղերը։

Մաղթենք ընկերութեանը վերադարձնելն իր հին կանոնադրութիւնը, որպէս զի նա ընդարձակի իր գործունէութեան շրջանակը, նորից վերաբանայ գիտական հանրակրթական առարկաների դասարանները, որովհետև ընկերութիւնը կարող կը լինի բաւականաչափ բարձրացնել մեր աղջիկների մտաւոր զարգացումը։

Մի մոռանանք, որ մեր սանուհիները ոչ միայն վարպետուհիներ պիտի լինեն, այլ և ամուսիններ, մայրեր, հասարակութեան անդամներ...

Սոֆիա Արղութեան-Երկայնաբազուկ

ռավարութիւնը կաշուից դուրս է գալիս և մէկի տեղ հարիւր մարդկանցից վրէժխնդիր լինում։ Այդպէս է Դաշնակցութիւնը նաև իր լիդերների վերաբերմամբ. ասացէք խնդրեմ, ձեր պօլիցիայից ովքե՞ր պատժվեցին, ու՞ր մնացին այն հազարաւոր բողոքները գիւղերից, որոնք բողոքում էին այն զինուորական խմբապետների դէմ, որոնք նրանց կաշին էին մաշկում, օրինակ, Աբարանից, Նոր-Բայազէտից ևայլն. ամենաշատը, «կանչում էին» նրանց այնտեղից և միևնոյն պաշտօնով ու տիտղով մի ուրիշ շրջան «ուղարկում». ուղարկել եմ ասում, որովհետև նրանք միշտ վերևից ամեն մի պաշտօնեայ «նշանակում են» և սոցիալիստաբար փաթթում ժողովրդի վզին։

Նրանք յայտնել են թէ, 20 հազարը, որ ուզում էին պոկել Հէյդար-Մազաթից, «յատկացնելու էին ուսումնարանների և այլ բարեգործական ձեռնարկութիւնների»։ Պարոններ, ձեր ասած շանտաժիստները աւազակներ չեն, այլ դրանք դաշնակցական նման մաքուր «յեղափոխականներ», որոնք մի բռիչով քանդում են ժողովրդի տունը, միւսով ուզում են իբր թէ շինել։ Երկրորդ, երրորդ, չորրորդ և աւելի փաստեր։ Պարոններ, ինչպէ՞ս եղաւ, որ Թիֆլիսից եկած խուզարկուն, հօ ֆրանսիացի յայտնի փնտռող Լեկօկը չէր, կամ ի՞նչ հռատութիւն ունէր նա, որ գալն ու գնալ Իգդիրից վերցնել բերելը մէկ եղաւ։ Իրողութիւնն այս է։ Շանտաժը Դաշնակցութեան շարքերի սեփականութիւն էր. երբ արդէն փորձը անաջող էր գնում, (հայրը վճռել էր կոպէկ չը տալ, եթէ իր վզին էլ թոկը գցէին ու քարշ տային) իրանք յայտնեցին տեղը և իրանք էլ գնացին բերին։ Ի՞նչ կայ որ, խեղճ Մարտիրոսը սարքեց, շինեց, ինքը գլորվեց, մէջ տեղը ջօջերը շահվեցին. աշխարհս միշտ թոյլի և ուժեղի կռիւ է. և ինչո՞ւ էք ուզում պատժել Մարտիրոսին, եթէ նա չը սարքէր այդ հէքեաթը. խօմ դուք էլ հազարներ չէի՞ք ստանայ։ Եւ գիտէ՞ք, այս բոլորից յետոյ «Ժամանակի» անժամանակ փայլածու «Փայլակ»-ի № 3-ի էջերում պ. դաշնակցական անյայտ գրչակը աւելի բարձր է գոռում հասարակութեան հասցէին, որ նրանք ասում են, «դաշնակցականները տարան և իրանք էլ բերին»։ Այժմ, պարոն գրչակ, ո՞րտեղ է Արշակաւանը. այնտե՞ղ, որտեղ շանտաժիստներն են բուն դրած, թէ՞ նրանք, որոնք իրանց խօսքերի սլաքներով ձեզ շեշտում են։ Ոչ, պարոններ, բարձր գոռալով միթէ արդարանալու յաւակնութիւնն ունէք։ Մի՞թէ այդպէս թիփի բօրան սարքելով կարող էք օրը ցերեկով պերճախօս իրականութիւնը կեղծել։ Լաւ է «աշխատաւորներ»-ի քրօնիկից խօսել—ահա ձեր միակ ելքը։

Մ. Բահաղեան

Երևան

ՆԱՄԱԿ ԿՐԱՍՆՕՎՕԴՍԿԻՑ

(Նամակ խմբագրութեան)

Մարտի 23-ին

Մուշեղ Տէր-Օհանեանի սպանութիւնը, ինչպէս և սպասելի էր, դառաւ հասարակական բնաւորութիւն ունեցող հարցերից մէկը։ Մամուլը՝ որի զինուորն էր այդ անմեղ զոհը, բարձրացրեց իր ձայնը։ Նա (մամուլը) իբրև հասարակական կարծիքների արտայայտիչը՝ արձանագրեց հասարակական այն կարծիքը, որ միակն էր այդ հարցի վերաբերմամբ—այսինքն, որ Մուշեղի սպանութիւնը տեղի էր ունեցել «Մշակ»-ում տպված յօդուածի պատճառով։ Այդ կարծիքը չէ ստեղծված մի որևէ անհատի յօդուածով կամ որևէ մէկի բամբասանքով։ Սպանութեան համար արձակած ատրճանակի ձայնի հետ միասին կայծակի արագութեամբ տարածվեց և այն լուրը, թէ՝ սպանութիւնը կապ ունի այդ յօդուածում ակնարկված անձերի հետ, և դա հասարակութեան կարծիքն էր, որը մի քանի օրից յետոյ լոյս տեսաւ որպէս լուր «Հօսանքում» և ապա տպվեցին մի շարք յօդուածներ «Մշակի» մէջ։

Ի հարկէ, ինչպէս միշտ՝ այս անգամ ևս «Ժամանակը» բաց արեց իր էջերը «հերքումներ» գրողների առաջ, որոնք ոչ մի միջոց չեն խնայում հասարակութեան միամիտ մասի աչքերին թող փչելու։

Նախ «Ժամանակի» էջերում կարդացինք մի հեռագիր, որտեղ ասված էր. «Դա սուտ է. մանրամասնութիւնը նամակով»։ Յետոյ նոյն թերթի № 50-ում կարդում ենք պ. Na...-ի նամակը, որտեղ խօսում է ինչոր «նախանձոտ բարեկամների» մասին։ Կարդում ենք նաև «Կրասնօվօդսկու մանուֆակտուրայի բոլոր գործակատարների» «Ուշադրաւ հերքումը», որտեղ (8 մագազինի մօտ 27 գործակատարներից ստորագրել են միայն ութը) «հաստատում են», որ «Մշակը» պրօվօկատոր է։ Բայց երբ այդ ստորագրողներից մէկին, 13 տարեկան երեխային, հարցրին թէ ի՞նչ է նշանակում «պրօվօկացիա», խեղճ երեխան ուսերը վեր քաշեց, իսկ միւս՝ պ. Դ. Միսկարեանի խանութի 14 տարեկան աշակերտին երբ հարցրին, թէ ինչո՞ւ է ստորագրել, ասաց որ «Դաշնակցութեան» շէֆերից մէկը բերեց և ստորագրել տուեց։ Միւս կողմից՝ խօսում են ինչոր սիրային արկածների մասին և այդ սպանութեանը տալիս են խանդից առաջ եկած գոյնը։

Բայց այս ամենը բաւական չէր, սրանք բոլորը մասնաւոր բաներ էին։ Հարկաւոր էր մի ընդհանուր բան, որտեղ ժողովուրդը, ամբողջ ազգը վկայէր. և այդ առիթը ներկայացաւ։

Ամսիս 18-ին ծխական ուսումնարանի կարիքները հոգալու նպատակով հրաւիրված էր ծխական ժողով։ Ժողովի վերջը պ. Նախագահը մի «ազդու ճառով» բացատրեց, որ Մուշեղի սպանութիւնը վերագրում են «Դաշնակցութեան», ուստի «ով որ քաջ է, թող դուրս գայ ասպարէզ և հաստատէ, որ այդ ճիշտ է»։ Հանդիսականներից մէկը յայտնում է, որ այդ կարծիքը հաստատող հիմքերից մէկը այն է, որ մի քանի մարդկանց մօտ «Դաշնակցութեան» տեղական շէֆերից մէկը դիմել է իրան և ասել. «այդ տղային հեռացրէք, թէ չէ վտանգի կենթարկվի»։

Իհարկէ, ժողովը առանց ղալմաղալի չանցաւ։ Կիրքը մեծ դեր էր կատարում։ Եղան նաև ուրիշ կասկածներ յայտնողներ, որոնք առիթ են տալիս ժողովրդին կասկածելու, ինչպիսին է պ. օբեր-շէֆի սպառնալիքը ուղղված Մուշեղին, այդ այն ժամանակ, երբ վերջինը հարցնում է. «այդ հանգամանկութիւնը կամաւոր է, թէ բռնի», նա պատասխանում է. «ես ցոյց կը տամ թէ ինչպէս է»։

Նախագահը առաջարկեց արձանագրութիւն կազմել, որ այդ սպանութեան մէջ «Դաշնակցութիւնը» չէ մասնակցել, բայց ժողովրդականներից շատերը չը համաձայնվեցին և թողնելով ժողովը հեռացան։ Ժողովը յետաձգվեց մինչև երեկոյ, բայց ժողովրդի բացակայութեան պատճառով չը կայացաւ։

Ինչո՞ւ համար է այս բոլորը։

Հեռագրով բաւականանալ «սուտ է» ասելով, «Ժամանակի» էջերը լցնել «պրօվօկատօրական» յօդուածներով և հնարել ինչ որ «նախանձոտ բարեկամներ» ու ցոյց չը տալ, թէ որոնք են այդ «նախանձոտ բարեկամները»...

«Մանուֆակտուրայի բոլոր գործակատարների» անունից նամակներ թխել և շէֆի միջոցով ման ածել փողոցները, 13—14 տարեկան երեխաներին ստորագրել տալու համար...

Յօրինել սիրային արկածներ, կամ թէ չէ՝ ծխական ժողովից աշխատել խորամանկութեամբ «վարկի վկայականներ» դուրս կորզել՝ քաղաքից հեռու, 5 վերստի վրա, կէս գիշերում կատարված ոճիրի համար, օգտվելով այն բանից, որ իրանց բիւրօկրատական ռեժիմի տակ սնված հայ ժողովուրդը չի համարձակվի «խաթրը կոտրել»։

Մի՞թէ այս ամենը բաւական չէ համոզվելու...

Եթէ իսկապէս յայտնի չէ, թէ «ո՞վ է սպանել... ինչու համար... ի՞նչ պատճառով...», ուստի և անկարելի է պահանջել նաև, որ այս ինչն է, կամ այն ինչը չի ասվի։ Իսկ եթէ «դաշնակցական» շէֆերը պահանջում են, որ անպատճառ ունենան այդ «վկայականը», այն ժամանակ աւելի մեծ իրաւունք ունեն պահանջելու սպանվածի բարեկամները։

Այս բոլորից յետոյ կարելի է գալ այն եզրակացութեան, որ Մուշեղը չէ սպանված։

Բայց փաստ է, որ նա սպանվել է։

Սպանված Մուշեղը ժպտում էր դագաղի մէջ պառկած։ Նա ժպիտով էր դիմաւորում ոչնչութեան ճանապարհին և գուցէ դրան յօշոտողը այդ ժպիտը տեսնելիս զղջում էր իր արածի մասին. բայց, աւաղ, ուշ էր արդէն։

Դէմօս

ԱՊԱՌԱԺ ՍՐՏԵՐ

(Թուրքի յիշողութիւններ)

Բաքու, 23 մարտի

Հիւսիսից հարաւ, արևելքից արևմուտք ապառաժ սրտերը գոյութիւն են ունեցել և ունեն—սրտեր, որոնք միշտ և անընդհատ իրանց վամպիր ձեռքերում են պահել, անդամահատել ու յօշոտել են իրանց նմաններին հէնց միմիայն նրա համար, որպէս զի բաւականութիւն տան իրանց քմահաճոյքներին, իրանց փարթամ կեանքին և որ գլխաւորն է կռել-կոփել են մի այնպիսի ամուր շղթայ, որով շղթայելով մարդկային ազատ բանականութիւնը, միտքն ու խօսքը, սարկացրել են նրան, ազատ մտքի ու խօսքի արտայայտողին, որպէս զի նա չը յանդգնի իր սև գործերը երևան հանելու, իր լպիրշ արարքները հասարակութեան առաջ դնելու։

Խարոյկ, թոյն, բանտարկութիւն և, սա է եղել վարձատրութիւնը այն անմահ հոգիների, որոնք դեռ ևս հին դարերում յանդգնել են նշտարել ապառաժ սրտերը։

Խաչ, գլխատում, սովամահ, քրիստոնէութեան արշալոյսին—գաղափարի համար մարտնչողների դափնին ու պսակն են եղել։

Մեծ Մանկան ձայնը, որը պիտի սրտերի սառոյցը հալեցնէր, եղբայրութեան, հաւասարութեան գաղափարը հիմնաքար դարձնէր մարդկային կեանքի համար—զարկվեց ապառաժ սրտին և նա իր մտքի վարձատրութիւնը փշեայ պսակով, աղի լեղի քացախով, խաչաձև փայտով Գողգոթայում գտաւ։ Եւ դա բնական ու զարմանալի չէ—նոր ու թարմ միտք և փտած գլուխ, սիրտը լեցուն եղբայրութեան, ընկերութեան պարզ ու քաղցր ըղձերով, իսկ իր հանդէպ կանգնած լերկ ու ապառաժ սև հոգին, մարդ կատարեալ աստուածակերպ, անապատում արցունք թափող աչեր, իսկ այնտեղ, փառաւոր բազկաթոռի վրա նստած մարդակերպ գազան, խարազանը ձեռքում, անարդարութեան կշիռը ոտների տակ, և յաղթվեց գաղափարը, այո, յաղթվեց նոր նուաճումներ ունենալու յոյսով ու գրաւականով։

Դարեր գլորվեցին, դարեր անցան։ Քրիստոնէական վարդապետութեան հիմունքների վրա ստեղծվեց մի նոր կեանք։

Օ՜, նոր արշալոյս, նոր վերածնութիւն, վերջապէս շընչաց միտքը. այժմ ազատ եմ, կարող եմ ապրել և այն առանց կաշկանդման, շղթայի ու բռնաբարման, կուլտուրա, գիտութիւն, լոյս, լոյս... բայց... բայց ապառաժ սիրտը քնած չէր, նա մի վիշապ հիդրայի նման առաջ նետվեց և երկիրը արեան մուգ գոյնով ներկեց։

Ապառաժ սիրտը չէ՞ր, որ դար առաջ արևմուտքը արեան ծով դարձրեց իր հարազատների արիւնով, իր գոյութիւնը կայուն պահելու և ազատ ու վեհ խօսքը մեռցնելու համար։

Ապառաժ սրտի մեծամտութիւնը ու փառթամութիւնը չէ՞ր, որ զինուոր Թագաւորի, այդ մեծ աշխարհակալի ճակատին դրոշմեց հետևեալը. «Դու այնքան արիւն ես թափել, որ քեզ խմելու համար հարկաւոր չէ կռանալ»։

Եւ այդպէս շարունակ ու շարունակ—օրինակներ հազարաւոր, փաստեր անհամար։

Կուլտուրայի ու առաջադիմութեան քանւորդ դար, լսվում էր ամեն կողմից։

Թևակոխեցինք և ի՞նչ, մի՞, սա արդէն աննկարագրելի է, սա արդէն մարդկային պատմութեան մէջ ամենաողբալի ու արիւնոտ էջերն է կազմում, Կարմիր Մարդասպանը, մի ամբողջ երկիր հուր, սուր ու արիւն ցրեց, իսկ քրիստոնեայ ապառաժ սիրտը մատների արանքով նայեց...։

Բազմաչարչար, բազմամիլիոն մի ժողովուրդ, որը դարերի ընթացքում իր քրտինք աշխատանքով ազրուկներ է կերակրել, որ իր հրակողին Աստուած է ճանաչել, այժմ իր մարդ լինելը զգալով, ցանկութիւն ունի մի քիչ մարդավայել կեանք վարելու և որի համար հարկաւոր են իրան մարդկային մի քանի իրաւունք. բայց հէ՜, զգոյշ կաց, ապառաժ սրտերը քնած չեն—տես գնդակահարութիւն, արհեստական սով, աքսոր, պատերազմ-դաշտային դատարան, տես, այնտեղ հայեր... Շմիդտ, Հերցենշտէյն, Իօլլօս և գուցէ շատ շատերը. լռի՛ր, ինչպէս եղել ես և կը մնաս....

Ապառաժ սրտեր... մինչև ե՞րբ։

Ապառաժ սիրտը չէ՞ր, որ անմահ Կովկասը դարձրեց արեան մի ովկեան, տեղ գտնելով ազէտ գլուխ ու վայրենի հոգու մէջ։ Անմեղների թափված արիւնը կը բուսցնէ՞ն դափնի և այն սև դափնի՝ սև սրտերի համար։

Ապառաժ սրտերի արդիւնքն է և Կովկասի ներկայ սովը—սով, որը մարդիկ է կոտորում և դեռ զոհեր կը տանի...,

Ապառաժ սրտեր չե՞ն, այս միլիօնատէր սև հոգիները, հայ թէ թուրք, որո՞նք երկինք բարձրացրած սովալլուկների աղաղակի ու լացի առաջ, փակում են իրանց աչքերը, կուրանում, մեռցնում իրանց սրտերը, մետաղի կտորից իրանց չը զրկելու համար։

Ապառաժ սրտերը չե՞ն որոնք այսօր խաղ են սարքում մարդկային պատւի, կեանքի, գոյքի դէմ, որ ինչ է իրանց եսը յափրանայ, իրանց գազանային հակումը լցվի...։

Ապառաժ սիրտը չէ՞ր, որ ձեռք բարձրացրեց մի լրագրի թղթակցի ծաղիկ հասակի վրա, գետին գլորեց նրան հէնց միմիայն նրա համար, որ նա յանդգնեց կեղծիքներ և խժդժութիւններ հրապարակ հանել, ճշմարտութիւնը արձանագրել։

Ապառաժ սրտերը չե՞ն, որ իրանց ճանկերում են պահում այսօր հէնց միմիայն Բաքւում տասը հազարից աւելի սովալլուկ ու մերկանդամ աշխատող ձեռքեր, որոնք փողոցներում վխտալով, զգայուն սրտերի վրա մուգ արիւն են կաթեցնում, արտասուք քամում աչքերից, իսկ քար սրտերը նրանց բազուկներից ստացած մետաղով աշխարհի ճոխ սեղանն են վայելում։

Ապառաժ սրտերը չե՞ն, որ դու «իմս» չես, դուրս գնա ասելով՝ դռնից դուրս է վռնդում երկարամեայ քաղցած գործողին...

Ապառաժ սրտերը չե՞ն, որ... սակայն մի մէկը յիշենք. նրանք անհամար են, մեր նկարագրածները՝ թուրքի յիշողութիւններ։

Բայց ո՛չ, թող ճնշի մեզ ապառաժ սիրտը քարացած հոգին, թող նա արիւնաքամ անէ վշտացած սրտերն ու մերկ մարմինները, սակայն հէնց այդ ճնշման, այդ հալածանքի մէջն է մեր փրկութիւնը. նա կը կռէ, կը կոփէ լուսաւոր գաղափարների հիմունքները հիմնաւորապէս, որոնք անցնելով անմահ մարտիկների արեան ովկեանով, կը հասցնէ մեզ ցանկալի ափը, ուր կը ծագէ մի նոր վարդագոյն առաւօտ, մի նոր գեղածիծաղ արշալոյս... Ուժը—հալածանքի մէջն է, կռիւը համբերութեան, իսկ գաղափարի յաղթանակը երկուսի...։

Ռուբէն Պօղոսեանց

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, ապրիլի 18-ին

Կարդալով «Փայլակում» դաշնակցական գործակատարների ցինիկական ընդօլիցիաները ընկեր Ստ. Շահումեանի դէմ, յայտնում ենք նրանց մեր զայրոյթը և ցաւակցութիւնը, որ այդ աստիճան կոյր խաղալիքներ են դարձել դաշնակցական խուժանապետների ձեռքին։ Միաժամանակ յայտնում ենք մեր համակրանքները ընկեր Շահումեանին և միանում ենք նրա նամակին, որի մէջ սկզբից մինչև վերջը արձանագրված է միմիայն ճշմարտութիւնը—Խաժակի արարքներից սկսած մինչև ատրճանակի խայտառակ «առասպելը»։

(61 ստորագրութիւն)

Թիֆլիս, ապրիլի 24-ին

Վաղուց է որ հասարակութեան մի որոշ մասը սպասում է թէ ինչ վախճան պիտի ունենայ այս ուսումնական տարվայ մէջ ճեմարանում պատահած մեծ «թիւրիմացութիւնը»։

Արդէն ընթերցող հասարակութիւնը տեսաւ թէ ինչպէս պատասխանեց 12 հայ խմբագիրներին և իրան բոլորովին «արդար» դուրս բերեց ճեմարանի մանկավարժական ժողովը, արածի հետևանքների պատասխանատւութիւնը ձգելով Կաթողիկոսի վրա, լաւ իմանալով, որ այնտեղ ամեն ինչ ենթարկվում է հոգևոր խըմբականների բարեհայեցողութեանը, որոնց ի հարկէ ձեռնտու չէ ճեմարանը ազատել նրանց ճանկերից։

Միշտ վեհարանի շեմքը ցոյց տուեց ճեմարանի մանկավարժական ժողովը թէ հայ խմբագիրներին և թէ մեզ, հեռացած աշակերտներիս։

Միայն Կաթողիկոսը (իմա դիւանապետը) կարող է քննութիւն նշանակել, դիմեցէք նրան։

Եւ մենք գնացինք բաղխելու մեծի դուռը։ Ցիշեցնելով Վեհափառին, որ ինքը յունվարին խոստացաւ քննութիւն նշանակել ուսումնական տարվայ վերջը ճեմարանի դէպքերի առիթով, խնդրեցինք իրականացնէ այդ տեսակ մի քննիչ-կօմիսիայի գոյութիւնը, բաղկացած թէկուզ հոգևոր բիւրօկրատներից, այնքան պարզ էր արդարութիւնը։

«Արդարութիւն կը փնտռէք հա. ամբողջ աշխարհքը անարդարութեան վրա է հիմնված, արդարութիւն ո՞րտեղ կայ որ։ Ես այսքան ծեր եմ, դեռ արդարութիւնը չեմ գտած, դուք երիտասարդ հասակներումդ արդարութիւն կը փնտռէք. Էհ, անփորձ էք, անփորձ, գնացէք, կը կարգադրեմ»։

Ահա Կաթողիկոսի առաջին պատասխանը։

Հետևեալ օրը նորից ներկայացանք Կաթողիկոսին իմանալու համար իր կարգադրութեան մասին։

«Հա, եկաք. լաւ, գնացէք Թիֆլիս, քննութիւն անպատճառ կըլլայ այնտեղ. մենակ ձեր գործը չէ, անոր վրա ուրիշ գործեր ալ շատ կան (այսինքն Մեսրոպ վարդապետի)։ Էհ, հազար ու մի խնդիրներ կան, գլուխ չեմ կարողանում հանել. լաւ, լաւ, գնացէք Թիֆլիս, քննութիւն այնտեղ կըլլայ, հանգիստ թողէք ինձ, շատ գնացել է, քիչն է մնացել»։

Իսկ թէ երբ կը լինի, ում ձեռքով կը լինի, այդ արդէն չիմացվեց։

«Քննութիւն անպատճառ կըլլայ», միայն այսքանը։

Սպասենք և տեսնենք։

Արտաշէս Յովհաննիսեան

Չարջոյ, ապրիլի 14-ին

Չարջոյի հայոց եկեղեցական - ծխական դպրոցի հոգաբարձութիւնը սրանով յայտնում է իր խորին շնորհակալութիւնը հետևեալ նուիրատու պարոններին, որոնք իրանց նըւէրներով օգնութեան եկան մեր դպրոցին։

Եղբայրք Ազբէլեաններ 100 րուբլի, Յակոբ Աստուածեան 100 ր., բագուրանիկ Յօնան Իւզբաշեանց 50 ր., Աւետիս Տէր-Գալստեանց իր ամուսնութեան առիթով 15 ր., Յարութիւն Մուղդուսեանց իր կնոջ մահվան տարեդարձին 10 ր., Խաչ. Խաչատրեան իր նշանադրութեան առիթով 10 ր., Ալ. Ալիխանեանց 150 պ. կիր, Արիստակէս Յակոբեան 4 հատ դասարանական նստարան, Բախշի Հայրապետեան 20 օր. այբբենարան։

Հոգաբարձութիւնս յայտնում է նաև իր շնորհակալութիւնը օր. Հերսիլիա Մուղդուսեանցին, որը սիրալիր կերպով ձրիաբար յանձն առաւ պարապել դպրոցումս մինչև ուսուցչի գալը, և այն բոլոր թատերասէրներին, որոնք երբեմն ներկայացումներ են տալիս դպրոցի օգտին։

Նախագահ հոգաբարձութեան՝
Ներսէս քահ. Աբրահամեան
Անդամ հոգաբարձութեան՝
Գրիգոր Ասրիեան

Բաքու, ապրիլի 20-ին

Կարդացի «Փայլակի» 10 համարում Գ. Ա.-ի յօդուածը իմ նաւթահանքի գործադուլի վերաբերեալ և խնդրում եմ տպագրել իմ պատասխանը։

Դեռ անցեալ տարի յուլիսին իմ հանքի բանւորները գործադուլ անելով՝ մի շարք պահանջներ էին դրել։ Այդ պահանջներին ես բաւարարութիւն տուի իմ և նրանց համերաշխ համաձայնութեամբ, որոնց մէջ մտնում է և մի ամբողջ տարվայ—մինչև առաջիկայ յուլիսի 20 վարձատրութիւնը։

Վերջին գործադուլից մի քանի օր առաջ բանւորներն առաջարկում են նոր պահանջներ—ռոճկի 30 տոկոս աւելացում և եկամուտի 40 տոկոս վարձատրութիւն։ Ես գնում եմ Բալախանի և անձամբ բացատրելով նրանց, որ հանքը ամսական 2—3 հազար րուբլի վընաս է անում, առաջարկում եմ շարունակել գործը և թողնել իրանց պահանջները, կամ եթէ չեն համաձայնվում և չեն հաւատում իմ խօսքերին՝ վերցնել իրանց վրա հանքը, բանեցնել և օգուտ կամ վնասն իրանք ստանալ։ Այս առաջարկութիւնն ապարդիւն է անցնում. նրանք պնդում են իրանց պահանջների վրա և ամսիս 11-ից դադարեցնում են գործերը։

Ինձ ազատ կացնելու համար այն ծանր պատասխանատուութիւնից, որ կառավարութեան կարգադրութեամբ դրված է իւրաքանչիւր հանքատիրոջ վրա — մինչև 24 ժամը յայտնել ոստիկանութեան, որ գործադուլ է հանքում, թէ չէ հանքատէրը ամեն մի ուշացրած օրվայ համար 3 հազար րուբլի տուգանքի տակ է ընկնում այն յարգելի պատճառով, որ հանքը իբրև գանձարանից բաց թողնված նպաստի գրաւական՝ համարվում է կառավարութեան ապահովութեան տակ, ես նոյն օրը յայտնում եմ ոստիկանութեան թէ՝ իմ հանքում գործադուլ է։ Ոստիկանութիւնը հանքն իր հսկողութեան տակ է առնում և 10 հատ պահապան է ուղարկում հանքը պահպանելու։ Իմ կողմնակի և ուղղակի յորդորները, դիմումները և խնդիրները չեն կարողանում համոզել բանւորներին, որ ինձ համար անհնարին է մնաս անող հանքից վարձատրութիւն տալ և ռոճիկ աւելացնել, և եթէ այս դրութեան մէջ ես շարունակում եմ գործը՝ այդ անում եմ միայն իմ 120 բանւորների ընտանիքներին մի կտոր հաց տալու համար։ Չեն համոզվում—և այնուհետև ինձ մնում է իմ հանքը փակված յայտարարել։

Ի՞նչ է պատահում այնուհետև, ի՞նչ - ինչ պատճառներից է ծագում բանւորների և ոստիկանութեան մէջ պատահած միջադէպը, որը իմ սրտին խոր ցաւ է պատճառել, ես այդ մասին բոլորովին տեղեկութիւն չունեմ և Գ. Ա.-ի ինձ վրա դրած մեղադրանքը միանգամայն անտեղի է։ Ընդհակառակը, միջամտութիւն եմ սկսել քաղաքապետի և ոստիկանապետի հետ՝ ձերբակալվածներին բանտից ազատելու համար, որը, սակայն, չէ աջողվում։

Մ. Սարուխանեան

Կրասնօվօդսկ, ապրիլի 14-ին

Խնդրում ենք ձեր լրագրի մի անկիւնում տեղ տալ հետևեալ երկտողին։

Մեր ուսումնարանի նորաբաց գրադարան ընթերցարանին գրքերով և թերթերով նպաստել են հետևեալ անձինք, որոնց յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը.

1) պ. Յ. Յ. Շաւարշ—Դր. Փաշայեանցի «Ընդարձակ դպրոցական առողջապահութիւն»-ը արժողութեամբ 6 ր., 2) Եղբ. Պետրոսեանցներ—22 կտոր գիրք արժողութեամբ 13 ր. 56 կ., 3) պ. Ն. Տէր-Գաբրիէլեանց—17 կտոր գիրք արժողութեամբ 3 ր. 48 կ., 4) պ. Դ. Միսկարեանց—20 կտոր գիրք արժողութեամբ 6 ր. 44 կ. և կէս տարվայ «Մշակ» լրագիր, 5) պ. Մ. Աբրահամեանց 25 կտոր գիրք արժողութեամբ 5 ր. 46 կ. և կէս տարվայ «Հօսանք» լրագիր, 6) պ. Ն. Բարխուդարեանց—կէս տարվայ «Баку» լրագիր, 7) պ. Աղ. Մելքումեանից—մէկ կտոր գիրք 3 ր., 8) պ. Մ. Սամուէլեանցից—3 թուար. գիրք 65 կ., 9) վարժուհիների ընկերութիւնից—4 կտոր «Նուէր մանուկներին»—64 կ.

Շնորհակալութիւն ենք յայտնում նաև այն անձանց, որոնք դրամով աջակցել են գրադարան-ընթերցարանի գործին։

Ի դիմաց Կրասնօվօդսկի Հայոց ծխական դպրոցի ուսուցչական խմբի աւ. ուսուցիչ՝
Դ. Ղահրամանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ Էջմիածնից հեռացվում են դիւանապետ Ներսէս և Մխիթար ու Բաբգէն վարդապետները։

Մօտ օրերս Թիֆլիս են հասնելու Ղզլարի քաղաքագլուխ Պետանեանցը և քաղաքային խորհրդի կողմից պատգամաւոր Պ. Գ. Կօրախեձէն՝ խնդրելու Փոխարքային երկաթուղային գիծ անցկացնել Ղզլար քաղաքի միջով։

Մօտ օրերս Կովկասի ուսումնարանական հոգաբարձուի պաշտօնակատար պ. Լավրոտինսկուն Քութայիսի ռէալական դպրոցի 7-րդ դասարանի կողմից պատգամաւորութիւն է ներկայացել և խնդրել է թոյլատրել իրանց քննութիւն տալ գիմնազիաներում լատինական լեզուից համալսարան մտնելու իրաւունք ձեռք բերելու համար։ Հոգաբարձուն, ժողովրդական լուսաւորութեան մինիստրի շրջաբերականի համաձայն, մերժեց նրանց խնդիրքը։

Սաստկացրած պահպանութեան հիման վրա դադարեցված է «Баку» լրագիրը։

Շամախու և Բաքուի միջև (112 վերստ) էլէքտրական երկաթուղային ճանապարհ շինելու նպատակով կազմակերպվել է ակցիօներական ընկերութիւն։

Բաքուի քաղաքապետի կարգադրութեան համաձայն դադարեցված է «Прогрессъ» լրագիրը իր վնասակար ուղղութեան պատճառով։ Դադարեցված լրագրի բաժանորդներին բաւարարութիւն է տրվում «Бакинскіе Отголоски» լրագրով։

Թիֆլիսի էլէքտրաքարշի անօնիմ ընկերութեան վերատեսուչը դիմել է Թիֆլիսի նահանգապետին և բողոքել Թիֆլիսի քաղաքային դումայի ապրիլի 18-ին կայացրած որոշման դէմ։ Վերատեսուչը գրել է, որ նախագծի մի քանի գլուխները խախտում են անօնիմ ընկերութեան հիմնական կոնցէսիոն պայմանագիրը քաղաքի հետ և ազգաբնակութեան շահերը և կարող է դժբախտ դէպքերի ծագման պատճառ դառնալ։ Ուստի նա խնդրում է նահանգապետին պարտադիր որոշումների նախագիծը յանձնել նահանգական քաղաքային գործերի վարչութեան քննութեանը և թոյլատրել իրան անձամբ վարչութեանը ներկայացնել իր կարծիքները և առարկութիւնները այդ նախագիծը հաստատելու դէմ այն ձևով, ինչով որ ընդունել է քաղաքային դուման։

Անդրկովկասի երկաթուղու վարչութեան նախահաշիւներ կազմող մասնաժողովը և բոլոր բաժանմունքների կառավարիչները երկաթուղու ճանապարհի կառավարչի օգնական ինժ. Զուրաբեանի առաջնորդութեամբ, ապրիլի 25-ին, մեկնել են Բաթում ճանապարհների ելևմուտի նախահաշիւները որոշելու համար։

Երկուշաբթի, ապրիլի 23-ին, Նորին Կայսերական Մեծութիւն Կայսրուհի Թագուհի Ալէքսանդրա Ֆեօդորովնայի անուանակոչութեան օրը Ալէքսանդրո-Նէվսկի զինուորական տաճարում Վրաստանի էկզարխ գերապատիւ Նիկօնը բարձր հոգևորականութեան մասնակցութեամբ պատարագից յետոյ կատարեց մաղթանք, որի ժամանակ Արսէնալի սարից արձակեցին սահմանած 21 թնդանօթներ։ Մաղթանքին ներկայ էին կոմսուհի Ե. Ա. Վօրօնցօվա-Դաշկօվան, Փոխարքայի զինուորական մասի օգնական գեներալ-լէյտենանտ Ն. Պ. Շատիլօվ և քաղաքացիական մասի օգնական սենատոր գ. խ. Ի. Վ. Միցկէվիչ, գեներալիտէտը, առանձին բաժինների կառավարիչները, զինուորական և քաղաքացիական վարչութիւնների պաշտօնեաները, ազնուականութեան պարագլուխները, քաղաքագլխի պաշտօնակատարը և շատ աղօթողներ։ Նոյն օրը մաղթանքներ կատարվեցին նաև հայ-լուսաւորչական Վանքի տաճարում, կաթօլիկների եկեղեցում, լիւթերականների եկեղեցում, մզկիթներում և սինագօգներում։ Քաղաքը առաւօտեանից զարդարված էր դրօշակներով։

Վերջին ժամանակներս Թիֆլիսում շանտաժը երևան է գալիս նոր և նոր վարիացիաներով. շանտաժիստները ծածկվում են զանազան կուսակցութիւնների և խմբերի անուան տակ։ Կախեթինսկի փողոցում հացթուխ Ա. Իսակաձէն մօտ օրերս նամակ է ստացել, առաջարկելով ընտրել երկուսից մէկը—մահ, կամ տալ 300 րուբլի։ Նամակի վրայի կնիքն է «Группа Тифл. анархистъ-коммунистовъ». Վ. Աւալիանիից անյայտ անձեր պահանջել են 300 րուբլի, սպառնալով հակառակ դէպքում սպանել։ Թիֆլիսի կայարանի կօնդուկտորական բրիգադայի բանւորներ վարձողը նամակ է ստացել գրոշմված «Группа соц.-революціонеровъ кондукторовъ»։ Անյայտները պահանջում են նրա մտցրած կօնդուկտորների դասաւորելու կարգը գծերի վրա՝ փոխել, սպառնալով հակառակ դէպքում սպանել։ Մի ոմն Մայիսաշվիլի նամակ է ստացել, որով փող էին պահանջել անյայտ անձեր և տեղ էին նշանակել, թէ ուր պէտք է դնել փողերը։ Մայիսաշվիլին մասնանշած տեղում փողի փոխարէն դրեց վրացերէն լեզուով մի նամակ ոտանաւորի ձևով, հետևեալ բովանդակութեամբ. «Ում համար կեանքը դառն է, նրա համար մահը քաղցր է. այնտեղ ոչ ոք ոչինչ չի խլի. այսօր թէ վաղը, միևնոյն է, պէտք է մեռնել. դա բնութեան օրէնքն է»։

Երէկ, ապրիլի 26-ին, առաւօտեան մօտ ժամը 10-ին ատրճանակի հարուածով ինքնասպանութիւն գործեց լուսանկարիչ Լալայեանցը։ Հանգուցեալը մի տարուց աւելի հիւանդ էր և վերջին ժամանակը կուրացաւ, և այդ հանգամանքը, հաւանական է, եղաւ ինքնասպանութեան պատճառը։

«Ալիխանով, Տօլէ և Ընկ.» գործարանի վարչութեան և բանւորների միջև կայացած համաձայնութեան շնորհիւ երէկվանից աշխատանքները վերսկսվեցին։

Երէկվանից Ադելխանովի գործարանում աշխատանքը դադարեց։ Գործադուլի պատճառը 104 բանւորի արձակելն է, տալով նրանց 1 շաբաթվայ ռոճիկ։ Բանւորները պահանջում են իւրաքանչիւր ծառայած տարվայ համար տալ 1 ամսվայ ռոճիկ։ Նրանց պահանջները պաշտպանում են միացած ընկերները։

Ժանդարմների կորպուսի հրամանատարին դիմաւորելու համար Բաքու գնացած ժանդարմական ոստիկանութեան վարչութեան կառավարիչ գնդապետ Ռօմանօվսկին վախճանվել է։

Անդրկովկասի ժանդարմական ոստիկանական վարչութեան կառավարիչ նշանակված է գնդ. Շչերբակօվը։

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Այսօր առաւօտեան, ապրիլի 18-ին, ս. Նունէի ճանապարհին ատրճանակի երեք գնդակով սպանվեց Վերին-Մաչխաանի գիւղի նախկին տանուտէրը, որը յայտնի էր «մէլ-կացի» (մարդ-գայլ) մականունով։ Պատմում են, որ գիւղացիները շատ ատելիս են եղել նրան։ Մի քանի օր առաջ երկու ակցիզնի ատրճանակաւոր վերադառնալիս են եղել Լակբէից Սղնախ քաղաքը։ Նրանք հարբած են լինում։ Ճանապարհին մէկը՝ Դ. Փիրալեան հանում է ատրճանակը և վիրաւորում է միւսին։ Վիրաւորվածին տարան Ցարսկոէ-Կօլօդցի զինուորական հիւանդանոցը։ Փիրալեանին քննիչը բանտարկել է։ Գաւառումս տեղի է ունեցել ոչխարների կոտորած»։

ԹԵԼԱՒԻՑ մեզ գրում են. «Որովհետև ամսիս 16-ին Թիֆլիսից եկող դիլիժանները կողոպտվեցին աւազակներից, ուստի «Մշակի» № 80-ը չէ ստացվել այստեղ։ Տարել են և պօստի պարկը (сумка) ամբողջ թղթակցութեամբ։ Աւազակները կողոպտելով երկու դիլիժանս՝ կատարելապէս մերկացրել են ճանապարհորդներին, հանելով նոյնիսկ կօնդուկտորի ոտնամանները։ Աւազակները եղել են 14 հոգի. գլուխները բաշլըղներով փաթթած»։

Ղազախից հաղորդում են հետևեալը. «Ուսուցիչ Յարութիւն Տէր Պետրոսեանց սպանվել է Մեծ Պասի վերջին շաբթին իր այգում աշխատելու ժամանակ։ Չարագործները նախ կտրել են լեզուն և կէս ժամից յետոյ գնդակահարել։ Պատճառը այն է եղել, որ ձմեռս գիւղացի «հայ ռազմիկները» բռնաբարել են նրա եղբօր կնոջը... որպիսի վարմունքի դէմ նա բողոքել է»։

Ներքին գործերի մինիստրութիւնը չինօվնիկներ է ուղարկում այն տեղերը, որտեղ ագրարական անկարգութիւնները վերսկսվել են նոր ուժով։ Նրանց տրված են յատուկ յանձնարարութիւններ այն նպատակով, որպէս զի պարզեն թէ որչափ այդ անկարգութիւնները գիւղացիների սուր կարիքի բնական հետևանքն են կազմում։ Չինօվնիկները պարտաւոր են տեղեկութիւններ հաւաքել և այն գրականութեան մասին, որ տարածվում է գիւղացիների մէջ, ի՞նչ լրագիրներ են կարդում նրանք և թէ ինչ ազդեցութիւն ունեն առհասարակ գիւղական բժիշկներն ու ուսուցիչները գիւղացիների վրա։ («Сегодня»)

Ոստիկանական դեպարտամենտը հաղորդել է նահանգապետներին, որպէս զի մայիսի 1-ին, անկարգութիւններ ծագելու դէպքում, ոստիկանութիւնը ամեն միջոցներ ձեռք առնէ թափօրներն ու ցոյցերը վերջ տալու, առանց, սակայն, զէնքի օգնութեան դիմելու։ Ոստիկանութիւնը չը պէտք է արգելք հանդիսանայ եթէ գործարաններում և փաբրիկաներում աշխատանքները ընդհատելու լինեն։ Պատահած ընդհարումների բոլոր դէպքերի մասին պարտաւոր են անմիջապէս արտակարգ հեռագրական զեկուցում տալ ներքին գործերի մինիստրին։ («Бир. Вѣд.»)

Ապրիլի 18-ին ֆինլանդական երկաթուղու Պետերբուրգի կայարանում կալանաւորվել են 6 հոգի, որոնց վրա կասկածում են, որ նրանք սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան անդամներ են և գնացել են կուսակցութեան արտասահմանեան նիստին մասնակցելու, Ֆինլանդիայի վրայով։ Մէկի մօտ գտնվել են փաստաթղթեր։ Չը նայելով որ միւսների մօտ ոչինչ դատապարտելի բան չէ գտնված, այնուամենայնիւ այդ 6 հոգին էլ կալանաւորված են։ («Русь»)

«Neue Fr. Presse» լրագրում տպագրված է Մոսկվայից ուղարկված հետևեալ հեռագիրը։ Մայիսի միջին թւերի մէջ արտասահմանեան ռուսաց սօց.-դեմօկրատները ունենալու են մի համագումար, որտեղ վճռվելու են մի շարք քաղաքական և տակտիկական կարևոր հարցեր։ Ռուսաց սօցիալ-դեմօկրատական երկու ֆրակցիաները—յեղափոխականներն ու էվօլիւցիօնիստները եռանդուն պատրաստութիւններ են տեսնում այդ համագումարի համար։ Ուղղափառ մարքսիստները ներկայ Դուման համարում են անզօր՝ պարլամենտական ճանապարհով քաղաքական ազատութիւնները իրագործելու համար։ Դումայի սօցիալիստական կուսակցութեան գլխաւոր նպատակը պէտք է լինի քննադատական ագիտացիան և կազմակերպչական գործունէութիւնը, բայց ոչ օրէնսդրականը։ Նրանք միանգամայն հրաժարվում են Դումայի միւս կուսակցութիւնների հետ համերաշխ աշխատակցութիւնից և նպատակ են դնում կռիւ մղել սահմանադիր-ռամկավարների գերիշխանութեան դէմ, որոնց ռամկավարութիւնը նրանց կարծիքով կեղծ է։ Մինչդեռ էվօլիւցիօնիստների նպատակն է պահպանելու Դուման, թէև նա թերի է ու անկատար, օրէնսդրական աշխատանք կատարելու միւս ընդդիմադիր կուսակցութիւնների հետ։ Նրանք վճռականապէս դէմ են առհասարակ պարլամենտական դասակարգային կռւին։ Ֆրակցիաների ընտրված պատուիրակների թիւը հաւասար է։ Վճռական դեր պիտի խաղան հրէական «Բունդի» 50 պատուիրակները, որոնք երկու ֆրակցիաների մէջ միջնորդ են հանդիսանում։ Պատուիրակների թւում լինելու են Թիֆլիսի կողմից՝ Պլեխանովը, Պետերբուրգի՝ Խրուստալեվ - Նօսարը, Մոսկվայից՝ Լենինը։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ապրիլի 25-ին, մօտ ժամը 9-ին, Բեթղեհէմի տուպիկում տուն № 3, Սուլաձէի տանը, մի անյայտ երիտասարդ ատրճանակի մի քանի հարուածներով մահացու կերպով վիրաւորել է Մարիա Բաշարուլիին։ Հաւաքած տեղեկութիւններից պարզվեց, որ Բաշարուլին չէր ապրում իր ամուսնու հետ, այլ ապրում էր իր սիրեկանի հետ։ Վիրաւորվածը ուղարկված է Միքայէլեան հիւանդանոցը։ Նոյն օրը ձերբակալել են նրա ամուսին Ալ. Բաշարուլիին։

Ապրիլի 25-ին, գիշերվայ մօտ 12 ժամին, գօրօդօվօյ Պրոկօֆիյ Բիբենկօվը գնալով իր դիրքի տեղը—6-րդ քաղաքամասը և հասնելով Վօրօնցօվսկի փողոցի և Մէյդանի անկիւնին, բերդան հրացանից 2 անգամ կրակեց անկիւնում գտնվող Կոստանեանի տան վրա և շարունակ անցաւ անյայտանալու նպատակով, 5-րդ քաղաքամասի ոստիկանութիւնը ձերբակալեց նրան։ Քննութիւն է կատարվում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, ապրիլի 12-ին

Ամեն անգամ «Ժողովրդական համալսարանների» մասին կարդալիս սրտի խորքից ախ եմ քաշում ու անիծում հայի դարևոր մոլութիւններից, միս ու արիւն դարձած անմիաբանութիւնը, որը դարերի ընթացքում, փոխանակ ծերանալու ու գերեզման մտնելու՝ օրըստօրէ աւելի հասունանում, աւելի խոր արմատներ է գցում «կուլտուրական»... հայ ժողովրդի ամեն խաւերում անխտիր ու թաղում թշուառութեան ովկիանոսում մեր չարաբաղդ նախնիքների աւելի չարաբաղդ զաւակներին։ Ասում են՝ երկնակամարի տակ ամեն ինչ ժամանակաւոր է. նայելով դարերի պատմածին և մեր ներկայ իրականութեան, գալիս ենք այն համոզման, որ հայի մոլութիւնները անմահ են և տանջանքները յաւիտենական։

Տարիներ առաջ մեր բազմաթիւ ընկերութիւնների շարքում գոյութիւն ունէր և «Լսարանական Ընկերութիւնը», որը եղածների մէջ ամենաօգտակար հաստատութիւններից մէկն էր և, որը բազմաթիւ ունկնդիրներ էր գրաւում դէպի ինքը դասախօսութիւնների ընթացքում ու կրթում զարգացնում թէ անչափահասների և թէ հասակաւորների միտքը, այդպիսով բարձրացնելով մեր հասարակութեան զարգացման մակարդակը։ Ամէն շաբաթ դասախօսութիւն էինք ունենում։ Խօսում էին մեծ մասամբ ուսուցիչներ և դրսեցիներ։ Այդ այն երանելի ժամանակն էր, երբ սև կրքերը, կուսակցական հաշիւները կարողանում էին տեղի տալ ընդհանուր զարգացման գործի դիմաց։ Թողնելով անձնական, եսասիրական հաշիւներ, միահամուռ ոյժերով մարդիկ հաւաքւել էին ընկերութեան շուրջը ու տարիներ կարողացան պահել այդ օգտակար հաստատութիւնը։ Բայց բարին, լաւը, օգտակարը Ե՞րբ են յարատեւել մեր տարեգրութեանց ընթացքում։ Փչեց պառակտման խորշակը թունաւորված կուսակցական սև կրքերով ու թառամեցրեց, մահացրեց «Լսարանական Ընկերութիւնը», երբ ուրիշ տեղեր ճիգ ու ջանք են գործ դնում այդպիսի հաստատութիւններ կանգնեցնելու։ Մենք եղածը մեռցրինք ու ձեռքներս ծալած նստած ենք անհոգ, անտարբեր։

Շաբաթը մի անգամ դասախօսելու համար խօսողներ շատ ունենք, որոնց ամբողջ տարւայ ընթացքում մէկ կամ առաւելը երկու անգամ հերթ կընկնէ։ Ազգային դպրոցներում 25—30 ուսուցիչներ կան, բողոքականների և կաթօլիկների դպրոցում ուսուցիչներ և հայերէն խօսող ամերիկացի դօկտօրներ 12—15 հոգի. դրսում էլ ուսուցիչներ և երիտասարդներ առնուազը 10 հոգի կը լինեն. այս ամենքից եթէ տարւայ ընթացքում յանձնառնի իւրաքանչիւրը մի դասախօսութիւն միայն պատրաստել (որի վերաբերմամբ աներկբայ ենք), արդէն գործը գլուխ եկած պիտի համարել։ Այսպիսի չնչին զոհողութեամբ, աշխատութեամբ եթէ մի կարևոր հաստատութեան կարելի է վերակենդանութիւն տալ, ինչու՞ նախաձեռնողներ չը կան... Այստեղ մենք երկրորդ անգամ իրաւունք ունենք ասելու, որ մեր սև կրքերը, հաշիւները մեզ կորստեան անդունդն են գահավիժում։ Ի՞նչ գործ ունեն «Լսարանական Ընկերութեան» հետ անձնական, կուսակցական և կրքոտ հաշիւները. չէ՞ որ այդպիսի հաշիւներ մաքրելու համար շատ տեղեր կան. ինչու՞ մի այդպիսի անմեղ, օգտակար հաստատութիւն զոհել անմիտ կամայականութիւնների, չէ՞ որ հին լսարանի անդամներն էլ տարբեր կուսակցութիւնների և հայեացքների տէր անձնաւորութիւններ էին, որոնք այնքան բարի գտնվեցին, որ գոնէ այդ հաստատութեան շրջափակում անկեղծ ձեռք մեկնելով իրար՝ տարիներ ընկերութեան գոյութիւնը յարատեւեցին։ Ա՜խ, դուք ձեր նախորդների փոքրացած, մանրացած յետնորդներ...

Գուցէ առարկողներ լինեն թէ դասախօսութիւններ երբեմն լինում են. այո, գիտեմ ամեն մի դասախօս իր շրջապատում կամ իրան նպաստաւոր պայմաններում երբեմն խօսում է (բացառութիւններին չը վերագրել մեր ասածը)։ Տէրը մի արասցէ, եթէ մի դրսեցի էլ համարձակվէ իր կարծիքը յայտնել, ամեն կողմից մեր «ազգասէրների» ոռնոցը կը բարձրանայ և աւելի խելօք կը լինէ վիճաբանողը, եթէ շուտ իր փասա-փուսէն հաւաքէ։ Մի անգամ ներկայ էինք մի դաշնակցականի դասախօսութեան. Ղալայի ուսուցիչներից մէկը ուզեց վիճաբանութեան մասնակցել. այնպիսի գոռում-գոչում, ոռնոց բարձրացրին մեր «ազգասէրները», որ վիճաբանող պարոնը անմիջապէս հեռացաւ, նախատեսնելով իր քիթ ու պռունգի ջարդվելը։ Մի անգամ էլ ներկայ էինք մի երիտասարդ սօցիալիստի դասախօսութեան դաշնակցականներում՝ այսինքն «Լիլաւա» Թաղի Թատերասրահում. այդտեղ էլ նոյն խայտառակութիւնը, և եթէ 8—9 հոգի երիտասարդ սօցիալիստները շուտով չը հեռանային սրահից դասախօսի հետ միասին, խայտառակութիւնը կատարեալ կը լինէր և ծեծից, տուր ու դմփոցից շատ հեռու կանցնէր...

Մենք չենք համարձակվում այսպիսի խայտառակութիւններին դասախօսութիւն անունը տալ և մտքերի զարգացման միջոցներ համարել։

Այսպիսի խայտառակութիւններ տեսնելիս մարդ երբեմն գալիս է ակամայ այն համոզման, որ լաւ է «Լսարանական Ընկերութիւնը» գոյութիւն չունի, եթէ ոչ ամեն անգամ փոխանակ դասախօսութիւնների ստիպված կը լինէինք խայտառակութիւնների ականատես լինելու։ Բայց ո՞ւր պիտի տանէ մեզ այս ճանապարհը։

Իբօ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Գերմանիայում եղող կուսակցութիւնների մէջ լիբերալները բաւականին անգոյն տեղ են բռնում և կարելի է ասել, որ նրանք զրկված են երկրի քաղաքական, տնտեսական կեանքի վրա մի առանձին ազդեցութիւն ունենալուց և այդ ներկայ լիբերալիզմը այն կուսակցութեան հետքերն է, որը մի քանի տասնեակ տարիներ առաջ ամենամեծ և երկրի քաղաքական կեանքին տօն տվող կուսակցութիւնն էր։

Տասնիններորդ դարի սկզբներին, երբ Գերմանիան մօդեռն տէրութիւն դառնալու ճամպան էր բռնել, երբ տնտեսական, քաղաքական հին կապանքները էլ ոյժ չունէին արթնացող ժողովրդին անշարժութեան մէջ կապկպելու համար, երբ Գերմանիան գիւղացիական երկիր լինելուց անցնում էր ինդուստրիականի, վերակազմված շրջաններում հանդէս եկաւ գերմանական լիբերալիզմը։ Դա մի մեծ ու հսկայ շարժում էր, որը տակնուվրա արեց հին նախապաշարումների պատնէշները։ Ով դժգոհ էր տիրող կարգերից, ով մի որևէ ամբաւականութեան առիթ, վերաստեղծելու տենչեր ունէր, համամիտ էր նոր Գերմանիա ստեղծելու գաղափարին՝ մտնում է այդ հսկայ շարժման մէջ և թև է տալիս նրան։ Նոյնիսկ անտեսապէս իրար հակադիր տարրերը և կամ ժողովրդի այն շերտերը, որոնք ըստ իրանց էութեան միմեայն յետադիմական լինել կարող են՝ տարվում էին այդ հոսանքից, և ահա այդ զանազանատարր բողոքաւորներից կազմված լիբերալիզմը իր ուժեղ հոսանքով ոչնչացրեց շատ բան անցեալից և նրանց տեղը դրեց մօդեռն կարգերը։

Սկզբում կռիւը համարեա տնտեսականից դուրս էր և կամ այդ խնդիրները այնքան թոյլ էին, որ կարելի էր լինում ներհակ շահերից կազմված տարրերին իրար հետ կապած պահել. այն ժամանակվայ հոգսը աւելի քաղաքական նուաճումներն էին և կամ անցեալ ժողովրդի մեծամասնութեան կողմից ատված՝ աւտօրիտէտների տապալումը։ Եւ հէնց որ նոր կարգերը հաստատվեցին, լիբերալիզմի պահանջների մի զգալի մասը իրականութիւն գտաւ և երկիրը սկսեց տնտեսապէս խաղաղ աճել. այն հակադիր տարրերը, որոնք ամփոփվում էին մի կուսակցութեան —լիբերալիզմի մէջ՝ սկսան բաժանվել և ոյժ տալ միւս կուսակցութիւններին. հարուածը մանաւանդ կատարեալ էր, երբ կազմակերպվեց սօցիալ-դեմօկրատիան և բանւորութիւնը իր շուրջը խմբեց։ Եւ 70-ական թւերից սկսած վերոյիշեալ և այլ ուրիշ պատճառներից լիբերալիզմը սկսում է աստիճանաբար թուլանալ, մինչև որ հասնում է ներկայ ամլութեանը։

Գերմանիայի այս թուլացած լիբերալիզմը նոյնիսկ բաժանված է երեք պարտիաների, գերմանական ժողովրդական կուսակցութիւն, ազատամիտ ժողովրդական պարտիա և ազատամիտների միութիւնը, որոնք մինչև վերջերս ոչ մի կապ չունէին իրար հետ և շատ անգամ պայքարում էին իրար դէմ։ Երկար ջանքերից յետոյ միայն վերջերս աջողվեց Ֆրանկֆուրտում, միջկուսակցական մի ժողովում որոշ խնդիրների վերաբերմամբ համաձայնութեան գալ պահելով իրանց կազմակերպչական ինքնուրոյնութիւնները։ Բայխստագում միասին գործելու համար ևս արդէն այդ երեք կուսակցութիւնները համաձայնութեան են եկել և գործելու են միասին։

Այդ երեքից ամենաձախ է «ազատամիտների միութիւնը», որի առաջնորդներն են քաղաքական յայտնի գործիչներ Բարտ և Նաուման. այս վերջինս այս տարի բայխստագի պատգամաւոր է ընտրված։ Այս երկուսն էլ յայտնի են իրանց այն տակտիկայով—որը Բարտ-Նաումանեան տակտիկ է կոչվում, որ ըստ դրանց լիբերալները և սօցիալ-դեմօկրատները պէտք է միասին գործեն, որ լիբերալիզմի մեծ թշնամին ոչ թէ ձախն է, այլ աջակողմը, դէպի ուր և դարձած պէտք է լինի լիբերալների հարուածները։ Սրանք միակ կուսակցութեան ներկայացուցիչներն են, որը իր նպատակը չէ դրել ոչնչացնել բանւորական կուսակցութիւնը, այլ ընդհակառակը նրա հետ գնալ է ուզում։ Բարտ և Նաումանը այնպիսի անձնաւորութիւններ են, որոնց գոյութիւնը գերմանական լիբերալիզմին հանում է մասամբ իր ներկայ ամօթալի դրութիւնից և ուրախալին այն է, որ դրանք աւելի ու աւելի համակրութիւն են ձեռք բերում լիբերալ միւս ճիւղերի մէջ և ազդում նրանց վրա։ Կարելի է ասել, որ գերմանական լիբերալիզմի ներկայ կենտրոնը Նաումանն է դարձել, որի միակ իղձն է լիբերալիզմը հանել իր ներկայ ամօթալի դրութիւնից, յարութիւն տալ այդ կուսակցութեան հին, բայց ցանկալի ոգուն և նրան յարմարեցնել ներկայ կեանքի պահանջներին։

Այս շաբաթ «ազատամիտների միութեան» կուսակցական համագումարն էր, որի ժամանակ Նաումանը մի ճառով բացատրել է լիբերալիզմի մօտակայ անելիքը։ Տալիս ենք այդ ճառի համառօտ բովանդակութիւնը, քաղելով Նաումանի օրգան «Hilte» շաբաթաթերթից։ Խօսում է նախ Նաումանը ներկայ բայխստագում եղող կուսակցութիւնների ուժերի մասին, որից երևում է, որ լիբերալ տարրերը կազմում են բայխստագի անդամների 14%, եթէ սրա վրա աւելացվեն սօցիալ-դեմօկրատները և նոյնիսկ նացիօնալ-լիբերալները, այն ժամանակ ևս բայխստագի ձախ թևը թոյլ է մնում աջից։ Ուրեմն լիբերալիզմը մենակ թողած միանգամայն անզօր է որևէ առանձին դեր ունենալու երկրի քաղաքական, տնտեսական կեանքի վերաբերմամբ և այդ դրութեան մէջ է նա արդէն մի քանի տասնամեակներից սկսած։ Լիբերալիզմը թուլացաւ մանաւանդ այն ժամանակ, երբ կանցլէր Կապրիվիի օրով մերժեց տէրութեան պահանջները զինուորական խնդրի վերաբերեալ։ Այն ժամանակ լիբերալիզմը աւելի մեծ շանսեր ունէր գործելու, քան այժմվայ կանցլէր Բիւլովի ժամանակ, որը միշտ հակված է լինում դէպի աջակողմը։

Ներկայ բայխստագում գոյութիւն ունենալ կարող է կուսակցութիւնների երկու գլխաւոր միացումներ. Նացիօնալ-լիբերալներ և պահպանողականների մի խումբ, որոնք միասին կազմում են ամբողջութեան 44%-ը, և ցենտրը ու սօցիալ-դեմօկրատիան երկրորդ խումբը, միասին կազմում են 42%։ Երկուսից և ոչ մէկն էլ չէ կազմում բացարձակ մեծութիւն, ուստի և նրանք հարկադրված են իրանց յաղթութեան համար շահել միւս փոքր կուսակցութիւնների ձայնը. և այդ կողմից ներկայումս առաջին տեղն է բռնում մանաւանդ լիբերալների 14%-ը. որ խումբը այս 14%-ը իր կողմը գրաւեց, նրանն է յաղթութիւնը։ Եթէ տէրութիւնը ուզում է իր քաղաքականութիւնը յենել պահպանողականներից և նացիօնալ-լիբերալներից կազմված միութեան վրա, այն ժամանակ նա ստիպված է առանձին ուշադրութիւն դարձնել լիբերալների վրա, որովհետև առանց վերջիններիս ուժի անկարող է իր պլանները անցկացնել բայխստագում։ Եւ ահա այսպէս, Նաումանի կարծիքով, լիբերալիզմը սկսում է ակտիւ դեր խաղալ երկրի կեանքում։ Տէրութիւնը եթէ ուզում է լիբերալներին աջակողմեան բլօկի մէջ պահել, անպայման հարկադրված է զգալի զիջումներ անել լիբերալներին և նրանց պահանջների մի մասը օրէնսդրութեան մէջ անցկացնել. այլ կերպ հաշտութիւն լինել չէ կարող. ուստի Նաումանը խորհուրդ է տալիս լիբերալիզմին մի փոքր ևս սպասել, մինչև որ տէրութիւնը իր գոյնը ցոյց կը տայ. եթէ նա զիջումներ չարեց, այն ժամանակ լիբերալները կը միանան ձախակողմեան բլօկին և տէրութեանը դժուարութիւնների մէջ կը դնեն։

Նաումանը նկատում է, որ պահպանողականները որքան զիջումներ էլ անեն, այնուամենայնիւ նրանք մնում են լիբերալիզմի հակառակորդները, որոնց դէմ և միշտ պէտք է կռուել։ Սօցիալ-դեմօկրատիայի և լիբերալիզմի յարաբերութեան մասին Նաումանը հետևեալն է ասում, որ այժմ այդ խնդիրը բաւականին դժուար դրութեան մէջ է դրված, քանի որ սօցիալ-դեմօկրատիան ոչ մի նշան չէ ցոյց տալիս, թէ ցանկութիւն ունի լիբերալների հետ միասին գնալու. այդ խնդիրը աւելի վատթարացաւ ներկայումս, քանի որ սօցիալ-դեմօկրատիան այս վերջին կրկընտրութիւնների ժամանակ չը պաշտպանեց լիբերալների կանդիդատներին, այլ յետադիմականներին, նոյն իսկ այնպիսի տեղեր, որտեղից նա առանձին դժգոհելու առիթ չունէր, օր. Հարաւային Գերմանիայում։ Երբ փոքր ինչ քաղաքական այս անցողական դրութիւնը կանցնի և երբ պահպանողականները և ցենտրը էլի նորից իրար հետ գործել կը սկսեն, ահա այդ ժամանակ ըստ Նաումանի սօցիալ-դեմօկրատիայի և լիբերալիզմի միասին գործելու խնդիրը աւելի այժմէութիւն կը ստանայ և գուցէ գլուխ էլ գայ։

Նաումանը նկատում է, որ ներկայի քաղաքական դրութիւնը բաւականին անորոշութեան մէջ և մի անցողական շրջանում է, և այս բացառիկ դրութիւնը հարկադրում է լիբերալիզմին հետևեալ տակտին հետևել. առ այժմ զիջել աջակողմեան բլօկին, որպէս զի տէրութիւնից կարելի լինի ռեֆօրմներ կորզել և եթէ տէրութիւնը լիբերալների պահանջներին չը զիջէ, այն ժամանակ միանալ ձախակողմեան թևերի հետ և բողոքել տէրութեան դէմ։ Նաումանի այս տակտիկը Բարտը հետևեալ կերպով է բնորոշել. Նաումանը ուզում է աւելի սիրով ճնճղուկը ձեռքին պահել, քան աղաւնու ետևից ընկնել, որին տիրանալը դեռ անորոշ է։

Նաումանից յետոյ խօսում է նրա ընկեր Բարտը նոյն խնդրի մասին. սա աւելի պեսիմիստական է տրամադրված, յոյս չունի, որ Բիւլովը ընդունակ կը լինի լիբերալների պահանջներին զիջել, քանի որ նա մինչև ոսկորների ծուծը աջակողմեան է, որ ցոյց է տալիս նրա անցեալ պարլամենտական գործունէութիւնը։ Ուստի նա առաջարկում է աւելի կտրուկ լինել և իսկոյն միանալ ձախակողմի հետ և վերջ տալ քաղաքական այն անորոշութեան, որը տիրում է Գերմանիայում։

Ուս.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆ

Ինչպէս յայտնի է, այն օրից, երբ Ռուսաստանը Հեռաւոր-Արևելքում գտաւ Մուկդէն և Ցուսիմա, «Նենգ Ալբիոնը», փշրված տեսնելով իր պատմական ախոյեանի ոյժն ու հմայքը, և, մանաւանդ, Եապօնիայի հետ նոր կնքած դաշնագրով ապահովութեան մէջ գտնելով Հնդկաստանը՝ իր միակ վիրաւոր կէտը, սկսեց մօտենալ Ռուսաստանին, սիրաբանել նրա հետ։ Նախկին թշնամին դարձաւ բարեկամ։ Եւ եթէ յիշում են մեր ընթերցողները, նոյնիսկ Անգլիան պատրաստվեց անցեալ տարի այցելութեան ուղարկել մի նաւաբաժին Կրօնշտադ, բարեկամական համբոյրներ փոխանակելու Ռուսաստանի հետ։ Բայց, քաղաքական անյարմար կացութեան պատճառով, այդ այցելութիւնը յետաձգվեց։ Այս տարի, ահա մտերմական այդ ցոյցը կատարվեց, և առաջին այցելողը եղաւ ինքը, Ռուսաստանը։ Մինչդեռ Թագուհի կայսրուհին գտնվում էր Անգլիա, ռուսական մի նաւաբաժին այցելեց Պօրտսմաւտ, ուր անգլիացիները շատ սիրալիր ընդունելութիւն ցոյց տուեցին իրանց հիւրերին։ Այդ այցելութեամբ ամրապնդվում են անգլօ-ռուսական յարաբերութիւնները։ Հաստատում են, որ անգլիական մի նաւաբաժին շուտով փոխադարձ այցելութեան պէտք է գայ Ռուսաստանին։

Անգլիական ջրերն այցելող ռուսական նաւաբաժինը բաղկացած էր երեք մարտանաւերից. «Սլավա» առաջին կարգի մի զրահակիր, որի շինութեան սպառազինումը չէին աւարտել դեռ ևս, երբ Բալտիկեան նաւաբաժինը ուղևորվեց դէպի Հեռաւոր-Արևելք. երկրորդը՝ «Ցեսարեվիչը», որ կարողացաւ ազատվել Պօրտ-Արտուրում եապօնական յարձակումներից. երրորդը՝ «Բօգատիրը», որ Վլադիվօստոկի նաւատորմից ողջ էր մնացել։

Այցելութիւնից յետոյ, երբ ռուսական նաւաբաժինը Պօրտսմաւտից հրաժեշտ առաւ, նաւահանգստից առաջինը դուրս եկաւ «Սլավան», որին հետևում էին «Ցեսարեվիչ»-ը ու «Բօգատիրը»։

Երբ «Սլավան» սկսեց հեռանալ, հռչակաւոր Նելսոնի ծովակալի ոչ նուազ հռչակաւոր առագաստանաւը, «Վիկտօրի»-ն, որը մասնակցել է Տաֆալգարի նշանաւոր ճակատամարտին, և մի տարուց ի վեր քանիցս նորոգման ենթարկվել ու պահպանվել որպէս սրբութիւն, «Վիկտօրին» ողջունեց «Սլավան» ռուսական ազգային երգը հնչեցնելով։ Քիչ առաջ նաւահանգստի բերանը հասել ու խարիսխ էր գցել «Դրէդնօտ» անգլիական զրահակիրը, որը աշխարհի ամենախոշոր ու ամենահզօր մարտանաւը կարելի է համարել։ Ռուս սպաններն ու նաւաստիները՝ բուռն հետաքրքրութիւնից մղված՝ իրանց հեռադիտակներն ուղղեցին դէպի նա, մօտից դիտելու համար զրահակիրների այս նորագոյն տիպը։ Ռուսների անցքի ժամանակ, անգլիական նաւատորմի բոլոր նաւաստիները շարվեցին կայմերի վրա և ցնծագին «ուրա»-ներ արձակեցին, որոնց արձագանք տուեցին ռուսները իրանց հերթին։ Ռուս նաւաբաժնի հրամանատարը մեկնելիս՝ անգլիական ծովակալութեան միջոցով շնորհակալութեան հեռագիր ուղղեց Եդուարդ թագաւորին։ Միւս կողմից ռուսական ծովային մինիստրը՝ Դիկօվ, հեռագրով շնորհակալութիւն յայտնեց անգլիական ծովային մինիստրին, ռուսական նաւաբաժնին ցոյց տրված պատուի համար։ Լօրդ Տուիդմաւտ, ծովային մինիստրը, շտապեց պատասխանել իր ռուս պաշտօնակցին, թէ անգլիական ծովակալութիւնը, ադմիրալիտետն ու ամբողջ նաւատորմը սրտագին հրճուանք զգացին պատուելով ու մեծարելով ռուս սպաններին ու նաւաստիներին։

Ահա այսպէս ձգվում է կամուրջը երկու դարաւոր «ախոյեանների», «թշնամիների» միջև, որոնք միմեանց բարեկամական ձեռք են մեկնում միահամուռ պաշտպանելու իրանց շահերը՝ հորիզոնի վրա երևացող ընդհանուր թշնամու՝ Գերմանիայի դէմ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

25 ապրիլի

ԲԵՐԴԻՉԵՎ, 24 ապրիլի։ Ցերեկով չորս զինված անձինք կանգնեցրին ձիաքարշի վագօնը, կօմիսիօնէր Գալիանից խլեցին 5700 րուբլի և ոչ ոքից չը հետապնդվելով, անյայտացան։

ԷՍԲԵՐԳ, 25 ապրիլի։ 22 ռուս սօցիալ-դեմօկրատներ ցերեկով մեկնեցին Պարկէստօն։ Երեկոյեան եկան կրկին 150 հոգի և վաղը ուղևորվելու են դարձեալ Պարկէստօն։

ԱԹԷՆՔ, 25 ապրիլի։ Երէկ ժամանեց անգլիական թագուհին պրինցէսի Վիկտօրիայի ուղեկցութեամբ։

Կ. ՊՈԼԻՍ, 25 ապրիլի։ Զէյթունում, ապրիլի 9-ից մինչև 15-ը եղել է 10 ժանտախտի դէպք, որոնցից 9 ը վերջացել է մահով։

ՓԱՐԻԶ, 25 ապրիլի։ Մինիստրների խորհրդում հասարակական աշխատանքների մինիստրը յայտնեց, որ նա արձակել է 8 հեռագրական ծառայողների՝ հեռագիրները ապաւաղելու համար, իսկ 2-ին յանձնել է դատարանի։

ԼՈՆԴՈՆ, 25 ապրիլի։ Մտքերի փոխանակութիւնից յետոյ լօրդերի պալատը 198 ձայնով ընդդէմ 46-ի մերժեց Լօրդ Կրիւի առաջարկը։ Ընդունվեց կոմս Կաուտօրի առաջարկութիւնը։

26 ապրիլի

ԲՐԻՒՍԷԼ, 25 ապրիլի։ Մինիստր-նախագահ դէ-Տրօօզը պարլամենտում կարդաց մինիստրութեան դեկլարացիան։ Նրա մէջ մատնանշվում է, որ կառավարութիւնը կը ձգտէ բարելաւելու բոլոր սօցիալական դասակարգերի կենցաղը, միջոցներ ձեռք կառնէ պաշտպանելու երկրի սահմանները, մտադիր է զարգացնել գիտութիւնը և արհեստները, դրա համար ստեղծելով յատուկ մինիստրութիւն, առաջարկել պարլամենտին՝ վերստին իր ձեռքը վերցնել աֆրիկեան գաղութը։ Պալատին իրաւունք է տրվելու յատկացնել 100,000 գուլդէն խաղաղ կօնֆերէնցիայի պատգամաւորներին ընդունելու համար։

ՓԱՐԻԶ, 25 ապրիլի։ Պատգամաւորների պալատում քննվում են ծառայողների սինդիկատների, ինչպէս և ընդհանուր քաղաքականութեան հարցադրումները։ Նացիօնալիստ Գօտիէն, դիմելով կառավարութեան, ասում է. «Այն ժամանակ, երբ դուք պատժեցիք գեներալ Բալեսին, պրուսական զինուորական մինիստրը պարլամենտից դրամական միջոցներ ստանալու նպատակով, նկատեց, որ թերևս ֆրանս-գերմանական պատերազմ ծագէ»։

Կլէմանսօն ընդհատելով հռետորին, յայտնում է, որ գեներալ ֆօն-Էյնէմը իբրև զինուորական մինիստր իրաւունք ունէր այդ ասելու։

Գօտիէն շարունակում է. «Ձեր կարծիքով, թէ Գերմանիայի ու Անգլիայի միջև ծագած կօնֆլիկտի դէպքում Ֆրանսիան չէզոք մնայ, չը պէտք է վերին աստիճանի լաւատեսութեամբ վերաբերվել դէպի հակամիլիտարիզմը»։

Զինուորական մինիստր Պիկարը ընդհատելով հռետորին, ասում է. «Այդ ոգին դեռ զօրքի մէջ չէ մտել»։ (Աղմուկ)։

ԼՈՆԴՈՆ։ Երկար, աղմկալի վիճաբանութիւններից յետոյ 416 ձայնով ընդդէմ 121-ի լօրդերի պալատը ընդունում է Իռլանդիային վերաբերվող օրինագծը առաջին ընթերցումից յետոյ։

ՄՕՍԿՎԱ, 25 ապրիլի։ Այսօր բացվեց համառուսական բժիշկների պիրոգովեան համագումարը։ Ժողովվել են մօտ 1000 բժիշկներ։ Բացի անդամներից ներկայ են և 2000 հրաւիրվածներ։ Համագումարը բացեց Պիրոգովի ընկերութեան նախագահ պրոֆէսօր Րէյնը, որը ուրուագծեց ընկերութեան վերջերս ունեցած գործունէութիւնը։ Զանազան տեղերից ստացված ողջոյնի հեռագիրները կարդալուց յետոյ պատուաւոր նախագահ ընտրվեց կանանց բժշկական ինստիտուտի վերատեսուչ պրոֆէսօր Ասլաղկինը։ Պրոֆէսօր Զաբօլոտնին ճառ արտասանեց, որով ընդգծեց, որ Ռուսաստանում սիֆիլիսը աջողութեամբ բժշկվում է։ Երեկոյեան նիստը կը գումարեն սեկցիաները։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Գոլովին, Վօրոնցովի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱԹՈՒԻՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզուղու. հ.։
Կ. Մ. ՋԻԿ-ՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. վիրաբուժութիւն։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳԶԵԼԻՆՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

Լոյս տեսաւ
ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս-Ի
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱԿՆԵՐ
գիրքը. Թուղթն ընտիր, տպագրութիւնը սիրուն, 112 էջ։
ԳԻՆՆ Է 25 ԿՈՊԷԿ
Հարցնել Թիֆլիսի գրախանութներում, ուր վաճառվում են նոյնպէս. 1) Խուլ Խաչիկ 25 կ.։ 2) Քաջ Աղասի 25 կ.։ 3) Ժամանակը ասէ 40 կ.։ 4) Սրտից 9 պատմութիւն 40 կ.։ 5) Սասունցի Դաւիթ 30 կ.։ 6) Երկասիրութիւններ 50 կ.։ 7) Գոլօ աֆօ, Խաչան 12 կ.։ 8) Աստուած չը ճանաչող 10 կ.։ Շէն Թագաւորի աղջիկ 25 կ.։ 11) Երկու աղբերացեղ 30 կ.։ 12) Հեքեաթներ 30 կ.։ 13) Անմեռ աղբիւր 8 կ.։ 14) Աստուած աղքատի կերպում 20 կոպէկ։
Մեծ քանակով գնողները դիմելու են Քամալեանց Ս-ին՝ Ներս. դպրանոց։
(Ն. հ. կ.) 13—20

,,Գուտտենբերգ"
Գրախանութում վաճառվում են
Արամայիս. Մի քանի գլուխ հայ-թուրքական ընդհարումներից—25 կ.։
Սօցիալիզմ և հայրենիք I պրակ.—20 կ.։
Մինին. Ի՞նչ են սովորեցնում սօցիալ-դեմօկրատ.—5 կ.։
Բօգդանօվիչ. Ընտրութեան օրը Գերմանիայում—5 կ.։
Յ. Ս. Որն է իսկական ներկայացուցչութիւնը—2 կ.։
Փոտեխին. Մեղուաբուծութեան ձեռնարկ 108 պատկեր—75 կ.։
Արմէն. Գասպար. Հայրենիք և ազգայնական շարժումներ—10 կ.։
Գիլնքէ պրոֆ. Կինն իբրև ամուսին—2 ր.։
Մրաւեան. Դաշնակցութեան կրեդօ—15 կ.։
Այգրնեան Ա. Վ. Քերականութիւն արդի հայերէն լեզւի բ. տպագր.—1 ր.։
Մանուէլեան Լ. Բանաստեղծութիւններ և պօէմաներ, գիրք 2-րդ—40 կ.։
Պալասանեան Ս. Քերականութիւն մայրենի լեզւի (մասն Ա. Բ. և Գ.) հինգերորդ տպ. 75 կ.։
Էփրիկեան Ն. Ս. Գրպանի Ատլաս—1 ր. 50 կ.։
Տօլստոյ Լ. Ն. Դաստիարակութիւն և կրթութիւն—25 կ.։
Լալայեան Ե. Սասմայ ծռեր—25 կ.։
Թումանով իշխ. Գ. Մ. Բարձրագոյն ուսումնարանը Թիֆլիսում—10 կ.։
Իշխանեան Բ. Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլօմատիան—40 կ.։
Բարամեան Յ. Քաղաքական յանցաւոր, դրամա 3 գործող. և 4 պատկերով—20 կ.։
Տան. Քրիստոս աշխարհում—3 կոպ.։
Բատրակ. Ընկեր մի դաւաճանիր և Բեբենշտամ. Պատւի համար—5 կ.։
Արեան Ձայներ, երգարան. 3-րդ տպ.—50 կ.։
Աղեանի. Խաբւած յոյսեր կօմ. 2 արար.—10 կ.։
Քամալեանց Ս. Ազգային առակներ—25 կ.։
Նեմիրօվիչ-Դանչենկօ. Հայուհի-Դայեանէն—8 կոպ.։
Մրաւեան. Ժամանակ է սթափվելու—15 կ.։
Սկօբելցինա. Ժողովների և միութիւնների ազատութիւնը—10 կ.։
Տէր-Գրիգորեան. Բ. Ազատութեան խանդ. բանաստ.—20 կ.։
Բաբախանեան Յ. Տանուտէր Օհանը—8 կ.։
Բախչօ. Երգիծաբանական հատուածներ—10 կ.։
Ջանեան Ա. Բանաստեղծութիւններ II պրակ—10 կ.։
Ցէյտլին. Կանանց ընտրողական իրաւունքը—2 կ.։
Բօչարեանց. Սգոյ գիշեր—15 կ.։
Կաուցկի. Ներկայացուցչական կառավարութիւն—40 կ.։
Վիրաւոր բլբուլ. երգարան—45 կ.։
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазин «Гуттенбергъ», Г. И. Галстянцу.
2—2

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳՆԱՑՔՆԵՐ

(Թիֆլիսի ժամանակով)

Թիֆլիսից դէպի Բագու			
Արագ	6 ժամ	58 ր.	առաւօտ.
Մարդատար	9 »	3 »	»
Փօստատար	8 »	34	երեկոյեան
Թիֆլիսից դէպի Բաթում			
Փօստատար	1 ժամ	21 ր.	ցերեկվայ
Արագ	11 »	58 »	գիշերվայ
Մարդատար	1 »	3 »	»
Թիֆլիսից դէպի Բօրժոմ			
Մարդատար	9 ժամ	48 ր.	առաւօտ.
»	3 »	8 »	ցերեկվայ
Թիֆլիսից դէպի Երևան			
Մարդ-ապրանք.	1 ժամ	43 ր.	ցերեկվայ
Փօստատար	1 »	8 »	գիշերվայ

Ժողովրդական համալսարանի
Թիֆլիսի ընկերութեան հայկական սեկցիան սրանով յայտարարում է, որ հարկաւոր են ուսուցիչներ համալսարանի դասընթացների համար—մէկը հայոց լեզուի և միւսը թուաբանութեան համար։ Վարձատրութիւնը իւրաքանչիւր մի ժամ դասի համար մէկ րուբլի։ Ցանկացողները թող դիմեն մինչև ապրիլի 28-ը հետևեալ հասցէով.
Общество Армянскаго сельскаго хозяйства, лекціи народн. университетъ.

ԷԺԱՆԱԳԻՆ
գրադարանների Վարչութիւնը ձեռնարկելով գիւղական գրադարանների համար գրացուցակներ կազմելու գործը, սրանով դիմում է բոլոր հայ հեղինակներին, թարգմանիչներին և հրատարակիչներին, խնդրելով ուղարկել վարչութեան երկուական օրինակ իրանց գրքերից գրախօսելու և լաւագոյնները գրացուցակների մէջ մտցնելու։ Հասցէն՝ Тифлисъ, Вельяминовская ул. № 8. Дешевая библіотека-читальня.
(Հ. Հ.) 4—10



ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՒԹԻՒՆ
Տուալէտի ժամացոյց հայելիով և մուզիկայով։ Դուք մեծ բաւականութիւն կը պատճառէք ձեզ, ընտանիքին և հիւրերին, ձեռք բերելով ինքնախաղաց տուալէտի ժամացոյց հայելիով և սիմֆօնիա մուզիկայով, որը նուագում է շատ բարձր և երկար զանազան գեղեցիկ, ուրախ եղանակներ (ըստ ցանկութեան՝ մարշ, վալսեր, պօլկա և ժողովրդական երգեր) յղկված հայելիով, Պարիզի ձևով. բացի դրանից այդ ժամացոյցը ուղիղ ցոյց է տալիս ժամանակամիջոցը։ Գինը 20 րուբլու փոխարէն միայն 6 և 7 րուբլի. Նոյն տեսակ ժամացոյց հայելիով և մուզիկայով մշտական օրացոյցով, որը ցոյց է տալիս օրերի թիւը և ամսաթիւը. գինն է 8 րուբլի։ Հասցէն՝ Райманъ, Варшава, Закрочимская № 1/5։ Թղթակցութիւնները ռուսերէն և գերմաներէն լեզուներով։
շաբ. 1 անգ. 4—4

Թիֆլիսի Նաւթարդիւնաբերական Ընկերութեան
Վարչութիւնը
սրանով պատիւ ունի հրաւիրելու պ. պ. բաժնետէրերին
ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ,
որը կայանալու է ներկայ 1907 թւի ապրիլի 27-ին, ուրբաթ օրը, երեկոյեան ժամը 6-ին, ընկերութեան գրասենեակում, Սերգիեվսկի փողոց, տուն Ֆրիդօնեանցի, № 7.
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ
1) Անցեալ 1906 թւի հաշուի և հաշուեկշռի քննութիւնն ու վաւերացումը, վարչութեան և վերստուգող յանձնաժողովի զեկուցումների հետ. նոյնպէս ծախսերի նախահաշուի և ընկերութեան գործունէութեան ծրագրի քննութիւնը 1907 թւի համար։
2) Վարչութեան մի անդամի (§ 9), վերստուգող յանձնաժողովի երեք անդամի և երեք փոխանդամի ընտրութիւնը (§ 21)։ Եթէ ժողովը սահմանված ձայների քանակութեան բացակայութեան պատճառով չը կայանայ, երկրորդ անգամ նշանակվում է նոյն տեղը, մայիսի 6-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 11-ին, որը կը համարվի կայացած, ի նկատի չառնելով ձայների քանակութիւնը (§ 29)։
Տպագրված հաշիւը և բաժնետէրերի ցուցակը կարելի է ստանալ ընկերութեան գրասենեակում։
(Կ. ու.) (22, 27) 2—2

,,ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ" գրախանութում վաճառվում են

1. Պոմպէյի վերջին օրերը, Լօրդ Լիտտօնի թարգմ. Յ. Միրզոյեանի	գինը 1 ր. 50 կ.
2. Ասպետ, Վ. Փափազեանի	15 կ.
3. Կեանքը ծովերի խորքում, Լունկեվիչ, թարգմ. Ստ. Մալխասեանի	30 կ.
4. Տրիլբի, դրամա 4 արար. թարգմ. Լևոն Մելիք-Ադամեանի	25 կ.
5. Եաղ-սաա, վօդ. 1 արար. 2 պատկեր. Յակ. Ղազարեանի	25 կ.
6. Դարվինիզմ, Ս. Բալադեանի (Դարվինի պատկերով)	50 կ.
7. Ազնիւ զող, վիպակ. Ֆ. Մ. Դոստոյեվսկու, թարգմ. Ն. Զ.	10 կ.
8. Ինքնավարութիւն և Զեմստվօ, Բէլօկօնսկու, թարգմ. Կ. Ջալալեանի	15 կ.
9. Տնտեսագիտական զրոյցներ, Կարիշեւ, թարգմ. Կ. Ջալալեանի	40 կ.
10. Къ введенію на Кавказѣ Земскаго Самиуправленія Кн. Г. М. Туманова	20 к.
11. Քերականութիւն մայրենի լեզուի, Ա. Բ. և Գ. մաս. Ստ. Պալասանեանի	75 կ.
12. Ընդհանուր պատմ. Հին-Դար, Վինոգրադովի, թարգմ. Խաժակի	1 ր.
13. Եւրոպա և Հայաստան, Ամֆիտէատրովի, թարգմ. Ա. Մխիթարեանցի	10 կ.
14. Փուչ զաւակ, դրամա 5 գործ. Գ. Ղարաջեանի	50 կ.
15. Արևինի ուսանողը, թարգմ. Տ. Ջալէնի	25 կ.
16. Գծագրութեան օրինակներ, Լևոնեան, Ա. մաս	20 կ.
17. Բ. մաս » » » »	20 կ.
18. Գ. մաս » » » »	35 կ.
19. Դասագիրք ընդհանուր աշխարհագրութեան, քաղաքական մաս, կազմեց Լ. Բաբայեան	65 կ.
20. Начальная книжка для армян. школъ С. М.	55 к.
21. Կապալոն Հէնչլ գերմ. թարգմ. Լ. Բաբայեան	50 կ.
22. Հող և նրա մշակութիւն, Գ. Ղազարեանի	15 կ.
23. Սերմ և ցանք. Գ. Ղազարեանի	20 կ.

Գումարով գնողներին զիջումով։ Գրախանութը վերադիր վճարով ուղարկում է միմիայն նրանց, որոնք ուղարկում են կանխավճար։ Դիմել.—Тифлисъ, книжный магазинъ «Гуттенбргъ» Г. И. Галустяну.
2—2

Բացված է բաժանորդագրութիւն
1907 Թ.
,,ՆՈՐ-ԱՇԽԱՏԱՆՔ"
ժողովրդական-հասարակական-տնտեսական
շաբաթաթերթ
«Նոր-Աշխատանքը» նուիրված է լինելու հայ աշխատաւոր գիւղացիութեան և գիւղական պրօլետարիատի տնտեսական-իրաւական շահերի պաշտպանութեանը։
«Նոր-Աշխատանքը» առաջնակարգ տեղ է տալու մեր գաւառի կեանքի ուսումնասիրութեանը։
«Նոր-Աշխատանք»-ում աշխատակցելու են նրա ծրագրին ու ուղղութեանը համակրող հայ ինտելիգենցիան։
«Նոր-Աշխատանքը» իր տարեկան բաժանորդներին տալու է ձրի չորս-գիրք նուիրած գիւղատնտեսութեանը և ժամանակակից կեանքի իրաւական հարցերին։
ԲԱԺՆԵԳԻՆԸ

Ռուսաստանում		Արտասահմանում	
Տարին......	4 ր.	Տարին......	18 ֆր.
Կէս տարին...	2 ր. 50 կ.	Կէս տարին...	10 ֆր.

Հասցէն՝ Тифлисъ, редакцію журнала «Норъ-Ашхатанкъ», Бебутовская № 50.
13—0 Խմբագիր-հրատարակիչ՝ Վիրգինէ Աթանասեան

Տպարան «ՀԵՐՄԵՍ» Ընկ.
Электропечатня Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская № 5. Телефонъ № 852